ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ
ԵԿԵՂԵՑԻ

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

ՄԵՂԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ԿԱՆՈՆ

Հինգերորդ հրատարակութիւն

Երեւան
Մեղինակային հրատարակութիւն
2025

ՀՏԴ 23 / 28
ԳՄԴ 86.37
Մ 580

Կազմ.՝ Է.Մ. Մինասեան
Խմբ.՝ Մ. Արաբեան

Մ 580 Մեղաւորներին ապաշխարութեան կանչելու կանոն/Կազմ.՝ Է. Մ. Մինասեան.- Եր.: Հեղինակային հրատարակութիւն, 2025.- 144 էջ:

Գիրքը նախատեսուած է խոստովանահայրերի եւ ապաշխարութեան կարգի մէջ մտնող եւ գտնուող անձանց համար:

ՀՏԴ 23 / 28
ԳՄԴ 86.37

ISBN 978-9939-53-974-4

© Է. Մ. Մինասեան, 2025 թ.

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ
Տ. ՆԱԻԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԿՃՈՅԵԱՆԻ
ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԻ
ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԹԵՄԻ

Օրհնեալ է յիշատակը մեր սուրբ Հայրերի,
որոնք ժառանգութիւն թողեցին այս
Կանոնը՝ ապաշխարողներիս: Նրանց
բարեխօսութեամբ Տէր Աստուած ողորմի
ի Քրիստոս ննջած բարեպաշտ ծնողներիս՝
Մնացական Մինասեանին եւ Հայկուհի
Մկրտչեան-Մինասեանին եւ այս Կանոնով
առաջնորդուող ապաշխարողների
ննջեցեալներին. ամէն.
Աղերսում ենք՝ Տէր ողորմեա

ԱՌԱՋԱԲԱՆ

«Յառիւսուքը հասել է, եւ մօտեցել է Աստուծոյ արքայութիւնը. ապաշխարեցէք եւ հաւատացէք Աւետարանին»:
/Մրկ. Ա.15/

Տէր Յիսուս Քրիստոս Իր անձնական օրինակով յստակօրէն շեշտեց մկրտութեամբ վերստին ծնուելու եւ Աստուծոյ հետ հոգեւոր նոր կեանք սկսելու կարեւորութիւնը: Տիրոջ նախակարապետ Յովհաննէս Մկրտիչը, ժողովրդին մկրտութեան կանչելով՝ ապաշխարութեան կոչ է անում, որպէսզի մարդիկ սուրբ սրտով եւ մաքուր մըտքով մերձենան Աստծուն:

Եդեմական պարտէզում, նախահայր Ադամի՝ Աստուծոյ խօսքի հանդէպ մեղանչումով, մարդկային բնութեան մէջ շեղում առաջացաւ՝ Աստուծոյ կամքից դէպի մարդու անձնական եսակենտրոնութիւն: Այս երեւոյթն է, որ քայլ առ քայլ մարդուն հեռացնում է իր իսկ Արարչից, ինչը նշանակում է նաեւ՝ իր սկզբնապիպ էութիւնից: Ս. Գրքի աստուածաշունչ պատուիրանները գլխաւորապէս նպատակ են յետապնդում վերականգնել մարդ-Աստուած յարաբերութեան խզումը, ինչը մեծապէս պէտք է վերականգնի մարդ մարդ եւ առողջ բարոյական յարաբերութիւնը՝ եղբայրասիրութեան մեծ պատուիրանի կեանքի կոչմամբ:

Տէրը ոչ մի մեղաւորի կորչելը չի ցանկանում, այլ նրա սխալ ճանապարհից դառնալը, վերականգնուելը ճշմարտութեան մէջ ու արդարանալը. ինչպէս նկարագրում է Եզեկիէլ մարգարէն. «Անօրէնը, եթէ յետ կանգնի իր գործած անօրէնութիւններից ու պահի իմ բոլոր պատուիրանները, արդարութիւն գործի ու ողորմածութիւն անի, ապրելով ապրելու է ու չի մեռնելու: Նրա գործած բոլոր մեղքերը, կատարած բոլոր անիրաւութիւնները՝ չեն յիշուելու, այլ իր գործած արդարութեան համար նա ապրելու է» /Եզեկ.ԺԸ. 21/: Աստուած իւրաքանչիւր մարդու՝ իր իսկ առօրեայի մէջ, հանապազ հնարաւորութիւն է տալիս իրեն տեսնելու, անդրադառնալու եւ ջանքեր գործադրելու՝ վերադառնալու մարդկային ապտուածանման պատկերի նորոգմանը: Ապաշխարութիւնը, մեր առօրեայում՝ ապտուածային ուղենշած ճանապարհից շեղուելու գիտակցութեան անդրադարձն է: Ապաշխարութեան արդիւնքում ողորմած Աստուած, տեսնելով մարդու դէպի ճշմարտութեան գիտութիւնը ընդառաջ գնալու կամքն ու ջանքը, վերականգնում է Արարիչ եւ արարած յարաբերութիւնը եւ փրկութեան ճանապարհով առաջնորդում դէպի հոգեւոր բանականութեան բարձր գիտակցական վիճակի: Ապաշխարութեան խորհրդի կատարումով, մարդ, նախ՝ գիտակցաբար անդրադառնում եւ քննում է իր մեղքերը եւ զղջում, այնուհետեւ՝ պարտաւորութիւն է

զգում օծեալի առջեւ խոստովանելու գործած մեղքերը, որպէսզի հոգեւոր հօր՝ դարմանիչ հոգեւոր դեղամիջոցներով կարողանայ հատուցել եւ կատարելապէս առողջանալ:

Հինկտակարանեան ապաշխարութեան լաւագոյն պատումը՝ Յովնան մարգարէի քարոզչութեան միջոցով նինուէացիների՝ անօրէնութիւնից դառնալը, զղջալն ու ապաշխարութեան մէջ մտնելն է, որի արդիւնքում ապաշխարողներն արժանացան Տիրոջ փրկութեանը:

Ապաշխարութիւնն անհրաժեշտ է ամէն մարդու: Այն առաջանում է նախ մեր խոկումների եւ խորհրդածութիւնների ժամանակ, երբ մտածելու եւ ինքնաքննութեան առիթ ենք ունենում եւ մեր հոգու աչքերով զննում ենք մեր կեանքի ընթացքը: Մարդկային մեղքերից ազատուելու եւ արդարանալու համար մեզ առաջին հերթին անհրաժեշտ է գիտակցել եւ ընդունել մեր մեղաւոր լինելը. նախ պէտք է ճանաչենք ճշմարտութիւնը, որպէսզի այն մեզ հնարաւորութիւն տայ ազատուելու մեղքից, հակառակ պարագայում մենք ինքնարդարացման եղանակով անընդհատ կդոփենք միեւնոյն տեղում: Զղջման եւ ցաւի գիտակցումը՝ գործած մեղքի հանդէպ, վճռականօրէն բերում է այլեւս այն չկրկնելուն: Երբ մենք անվերապահօրէն վստահում ենք մեր Տիրոջը՝ փրկութեան արժանանալու յոյսով. պէտք է քաջ քայլի դիմենք՝ կանգնելով Աստուծոյ

օծեալի առջեւ եւ խոստովանելով մեր մեղքերը՝ անվերապահ հաւատք ունենալով, որ Փրկիչ Տէրը քաւութեան եւ թողութեան պէտք է արժանացնի մեզ: Խոստովանութեան յաջորդ քայլը գործած մեղքերի դիմաց որոշակի հատուցում տալն է, ինչպէս Հին ուխտում՝ մեղքերի թողութեան համար զոհ էին մատուցում. «Նա պէտք է խոստովանի իր մեղքերը. Տիրոջ նկատմամբ կատարած իր յանցանքների եւ գործած մեղքերի համար ... թող զոհ մատուցի. քահանան դրանով քաւութիւն պիտի տայ նրա մեղքերին, եւ նա թողութիւն պիտի ստանայ» /Ղեւտ. Ե. 5/: Ապաշխարութեան նպատակը մեղաւորին հոգեպէս վերականգնելն ու արդարացնելն է մարդու եւ Աստուծոյ առջեւ: Ապաշխարել չի նշանակում յետ նայել ափսոսանքով, այլ մտահոգուելով խոտոր ընթացքի համար, յոյսով առաջ նայել մտածելու շտկուած եւ ճիշտ կեանք ապրելու մասին: Այս հնարաւոր է, երբ մենք անվերապահ վստահութիւն ունենանք մեր միակ Փրկիչ Յիսուս Քրիստոսի հանդէպ, Ով մեր կեանքի Լոյսը եւ մեր հոգեւոր պատերազմում յաղթանակն ու յարութիւնն է:

Սրբազան մեր Եկեղեցին իր ծիսական կեանքում մեզ ամէն օր աղօթքների ու շարականների քարոզների ու սուրբգրային ընթերցումների միջոցով յիշեցնում է մեր մեղսական կեանքի մասին,

սակայն ոչ թէ ընկճելու մեզ խեղճութեան եւ թըշ-
ուառութեան մէջ, այլ Աստծուն ծառայելու մէջ ա-
ռաւել զգօն լինելու, սովորելու Աստուծոյ խօս-
քի հանդէպ խոնարհ եւ ուշիմ ապրելու արուեստը:

Ահաւասիկ, այս աղօթագիրքը մեզ պէտք է օգնի
նորոգելու մեր եւ ամենապես Աստուծոյ յարա-
բերութիւնը մեր կեանքում, պէտք է օժանդակի վե-
րագտնելու Աստծուն եւ վերականգնելու նրա խօս-
քի պտուղները մեր առօրեայում: Այն նախատես-
ւած է խոստովանահայրերի եւ ապաշխարու-
թեան կարգի մէջ մտնող եւ գտնուող անձանց համար:

Մեղաւորներին ապաշխարութեան կանչելու
այս կանոնը վերցուել է Մեծ կամ Մայր Մաշտո-
ցի 1807 թ. Կ. Պոլսի հրատարակութիւնից:

Մեր խոնարհ աղօթքն է, որ սոյն գրքոյկը
պատրաստողները ապրեն եւ գործեն Աստուծոյ
մէջ եւ Նրանից գտնեն իրենց վարձատրութիւնը:

Մեր սրտաբուխ մաղթանքն է, որ ամէն ոք, ով
կբացի այս աղօթագիրքը, յիշի այն պատրաս-
տողներին եւ մեզ՝ ընթանալու ապաշխարութեան
ճանապարհով դէպի Երկնքի Արքայութիւն՝ Լոյսի
տեսութեանն արժանանալու, յոյսով հաւատալու,
որ Տէրն Իր սէրը յաւէտ պէտք է պահի ամենքիս
կեանքում:

Վարդան աբեղայ Նաւասարդեան

Խրատ համառօտ առ ապաշխարողս

Պարտ է ապաշխարողին՝ սրտաբեկ, սրտաթափ եւ սրտառուչ լինել՝ մինչեւ ցօր մահուն իւրոյ: Եւ ընդդէմ մեղացն անիրաւութեան դնել զարդարութիւն, ոխակալութեան՝ զսէրն, ստութեան՝ զճշմարտութիւն, ճանճրութեան՝ զժուժկալութիւն, եւ հանապազ ի դուռն Եկեղեցւոյն երթալ, զաչսն՝ յարտասուս, զլեզուն՝ յաղօթս առ Աստուած, զլսելիսն՝ յունկնդրութիւն պատուիրանացն Աստուծոյ, եւ զձեռսն՝ յողորմութիւն աղքատաց: Եւ այս է կալ առ արդարութեան, որով խառնի ի գունդս սրբոցն, եւ ի թիւս հրեշտակաց, եւ յորդեգրութիւն Հօրն Երկնաւորի եւ ի ժառանգութիւն Երկնից Արքայութեան, որում Տէր արժանացուսցէ զամենայն հաւատացեալս Անուան Իւրոյ. ամէն:

Համառօտ խրատ ապաշխարողներին

Ապաշխարողը պարտաւոր է սրտաբեկ, սրտաթափ եւ սրտառուչ լինել՝ մինչեւ իր մահուան օրը: Եւ ընդդէմ անիրաւ մեղքերի դնել արդարութիւնը, ընդդէմ ոխակալութեան՝ սէրը, ընդդէմ ստութեան՝ ճշմարտութիւնը, ընդդէմ ճանձրութեան՝ ժուժկալութիւնը, հանապազ Եկեղեցի գնալ, աչքերն՝ արտասուքներով, լեզուն՝ առ Աստուած աղօթքներով, լսելիքը՝ Աստծու պատուիրաններն ունկնդրելով, եւ ձեռքերը՝ աղքատներին ողորմելով: Եւ այս է արդարութեան մէջ լինելը, որով խառնւում է սրբերի գնդերին, հրեշտակների թուին եւ որդեգրւում է Երկնաւոր Հօրը եւ դառնում Երկնային Արքայութեան ժառանգորդ, որին Տէրը թող արժանացնի Իր Անուանը բոլոր հաւատացողներին. ամէն:

Ջեկեալսն յապաշխարութիւն՝ տանի քահանայն ի դուռն եկեղեցւոյն ի գիշերի, եւ կացուցանէ հանդէպ դրանն ընդ աջմէ, եւ ասեն զայսոսիկ է զուբղայ սաղմոսս՝ ի թիւ:

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո.

Եկեսցէ արքայութիւն Քո.

Եղիցին կամք Քո որպէս յերկինս՝ եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր.

Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց.

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն.

Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Քահանան, գիշերով, ապաշխարութեան եկածներին տանում եւ կանգնեցնում է եկեղեցու դռան առջեւ, իր աջ կողմում. եւ ասում են եօթ զուբղայ սաղմոս՝ ի թիւ:

Օրհնեալ մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը.

Քո արքայութիւնը թող գայ.

Քո կամքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է:

Մեր հանապազօրեայ հացը տուր մեզ այսօր.

Եւ թող մեզ մեր պարտքերը, ինչպէս եւ մենք ենք թողնում մեր պարտապաններին.

Եւ մի՛ տար մեզ փորձութեան, այլ փրկի՛ր մեզ չարից.

Քանզի Քոնն է արքայութիւնը եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԽԱ

Որպէս փափագէ եղջերու յաղբերս ջուրց, այնպէս փափագէ անձն իմ առ Քեզ, Աստուա՛ծ:

Ծարաւի է անձն իմ առ Քեզ, Աստուա՛ծ հզօր եւ կենդանի. ե՞րբ եկիցս երեւեցայց երեսացդ Աստուծոյ:

Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ եւ ի գիշերի, եւ այն զի ասէին ցիս զօրհանապազ, թէ՝ Ու՞ր է Աստուած քո:

Զայս որպէս յիշէի՝ տառապէր յիս անձն իմ. քաջալերէի, զի մտից ընդ յարկաւ սքանչելեաց տանն Աստուծոյ, ի ձայն ցնծութեան խոստովանութեան, եւ ի ձայն բարեկենդանութեան:

Արդ ընդէ՞ր տրտում ես, ա՛նձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ Նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուա՛ծ է:

Անձն իմ յոյժ խռովեցաւ, վասն այսորիկ յիշեցի զՔեզ յերկրէն Յորդանանու, ի Հերմոնէ ի լեռնէ փոքուէ:

Խորք ի խորոց կարդացին առ Քեզ ի ձայն սահանաց Քոց. ամենայն զբօսանք Քո եւ ալիք Քո անցին ի վերայ իմ:

ՍԱՂՄՈՍ 41

Ինչպէս եղջերուն ջրի ակունքներին է փափագում, այնպէս էլ ես Քեզ եմ փափագում, Ո՛վ Աստուած:

Անձս ծարաւ է Քեզ, Աստուա՛ծ հզօր եւ կենդանի. ե՞րբ պիտի գամ ու երեւամ Քո առաջ, Ո՛վ Աստուած:

Գիշեր-ցերեկ իմ արցունքներով սնուեցի, քանզի ամէն օր ինձ ասում էին. «Քո Աստուածն ո՞ւր է»:

Դա յիշելիս՝ անձս տառապում էր իմ ներսում, բայց քաջալերւում էի, որ պիտի մտնեմ Աստծու տան սքանչելի յարկի տակ՝ ցնծութեան ու օրհնութեան ձայնով եւ ձայնով բարեբանութեան:

Արդ, ինչո՞ւ ես տրտմում, ա՛նձ իմ, կամ ինչո՞ւ ես խռովեցնում ինձ. յուսա՛ առ Աստուած, խոստովանի՛ր Նրան, իմ անձը փրկողն Աստուածն է:

Անձն իմ խիստ խռովուեց, դրա համար Քեզ յիշեցի Յորդանանի երկրից ու Հերմոնի փոքր սարից:

Խորխորատներից Քեզ կանչեցին Քո սահանքների ձայնով. Քո բոլոր կոհակներն ու ալիքներն անցան իմ վրայով:

Ի տուէ պատուիրեաց Տէր զողորմութիւն Իւր, ի գիշերի զօրհնութիւն նոր. եւ աղօթք իմ առ Աստուած վասն կենաց իմոց:

Ասացի Աստուծոյ՝ Ընդունող իմ ես, ընդէ՞ր մերժեցեր զիս, ընդէ՞ր տրտում գնամ ես ի նեղել թշնամւոյ իմոյ:

Ի փշրել ոսկերաց իմոց նախատեցին զիս թշնամիք իմ, յասել ցիս զօրհանապազ, թէ՝ Ո՞ւր է Աստուած քո:

Արդ ընդէ՞ր տրտում ես, անձն իմ, կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ Աստուած, խոստովանեա՛ Նմա, փրկիչ երեսաց իմոց Աստուա՛ծ է:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ցերեկը Տէրն Իր ողորմութիւնը հաստատեց, գիշերը՝ նոր օրհներգութիւն. ես աղօթում եմ Աստծուն իմ կեանքի համար:

Աստծուն ասացի. «Ինձ ընդունողը Դու ես, ինչո՞ւ մերժեցիր ինձ, ինչո՞ւ տխուր լինեմ թշնամուս հալածանքի ժամանակ»:

Երբ ոսկորներս փշրուեցին, թշնամիներն իմ նախատեցին ինձ՝ ամէն օր ասելով. «Քո Աստուածն ո՞ւր է»:

Արդ, ինչո՞ւ ես տրտմում, ա՛նձ իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում. յուսա՛ առ Աստուած, խոստովանի՛ր Նրան՝ իմ անձը փրկողն Աստուածն է:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԾԶ

Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ողորմեա ինձ, զի ի Քեզ յուսացաւ անձն իմ.

Ի հովանի թեւոց Քոց յուսացայց, մինչեւ անցցէ անօրէնութիւն:

Աղաղակեցի առ Աստուած բարձրեալ, առ Աստուած բարերար իմ:

Առաքեաց յերկնից եւ կեցոյց զիս, եդ ի նախատինս որ կոխէին զիս:

Առաքեաց Աստուած զողորմութիւն եւ զճշմարտութիւն Իւր, եւ փրկեաց զանձն իմ ի միջոյ գազանաց, զի ննջէի ես խռովեալ:

Որդւոց մարդկան ատամունք իւրեանց զէն եւ նետք են, եւ լեզուք նոցա որպէս սուր սուսեր:

Բարձրեալ ես Դու յերկինս, Աստուա՛ծ, եւ յամենայն երկրի են փառք Քո:

Որոգայթ պատրաստեցին ոտից իմոց, խոնարհ արարին զանձն իմ. փորեցին առաջի իմ խորխորատ, եւ անկան ինքեանք ի նոյն:

Պատրաստ է սիրտ իմ, Աստուած, պատրաստ է սիրտ իմ՝ օրհնել եւ սաղմոս ասել Քեզ փառօք իմովք:

ՍԱՂՄՈՍ 56

Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ողորմիր ինձ, քանզի յոյսս դրի Քեզ վրայ.

Քո թեւերի հովանուն պիտի ապաւինեմ, մինչեւ անօրէնութիւնն անցնի:

Աղաղակեցի բարձրեալ Աստծուն՝ իմ բարերար Աստծուն:

Նա օգնութիւն ուղարկեց երկնքից եւ փրկեց ինձ, նախատելի դարձրեց ինձ ոտնահարողներին:

Աստուած Իր ողորմութիւնն ու ճշմարտութիւնն ուղարկեց եւ գազանների միջից ազատեց ինձ, մինչ ես խռովուած ննջում էի:

Մարդկանց որդիների ատամները զէնք եւ նետ են, իսկ նրանց լեզուները ինչպէս սուր սուսեր:

Բարձրեալ ես Դու երկնքում, Աստուա՛ծ, եւ ողջ երկիրն է բռնել փառքը Քո:

Որոգայթ պատրաստեցին ոտքերիս համար, ընկճեցին ինձ. առջեւս փոս փորեցին, բայց նրա մէջ իրենք ընկան:

Պատրաստ է սիրտն իմ, Աստուա՛ծ, պատրաստ է սիրտն իմ՝ օրհնելու եւ սաղմոսերգելու Քեզ իմ փառաբանութեամբ:

Զարթի՛ք, փա՛ռք իմ, զարթի՛ք սաղ-մոսիւք եւ օրհնութեամբ, եւ ես զարթեայց առաւօտուց:

Խոստովան եղէց Քեզ ի ժողովուրդս, Տէ՛ր, եւ սաղմոս ասացից քեզ յազգինս:

Մեծ եղեւ մինչեւ յերկինս ողորմութիւն Քո, մինչեւ յամպս՝ ճշմարտութիւն Քո:

Բարձրեալ ես Դու յերկինս, Աստուա՛ծ, եւ յամենայն երկրի են փառք Քո:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Արթնացի՛ր, փա՛ռք իմ, արթնացի՛ր սաղմոսներով եւ օրհներգութեամբ, եւ ես կ՚արթնանամ առաւօտեան:

Գոհութիւն կը մատուցեմ Քեզ ժողովուրդների մէջ, Տէ՛ր, եւ ազգերի մէջ Քեզ սաղմոս կ՚երգեմ:

Քո ողորմութեան մեծութիւնը հասաւ մինչեւ երկինք, եւ Քո ճշմարտութիւնը՝ մինչեւ ամպերը:

Բարձրեալ ես Դու երկնքում, Աստուա՛ծ, եւ ողջ երկիրն է բռնել փառքը Քո:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ՀԶ

Զայնիւ իմով ես առ Տէր կարդացի, ձայնիւ իմով առ Աստուած, եւ նայեցաւ առ իս:

Յաւուր նեղութեան իմոյ զԱստուած խնդրեցի ձեռօք իմովք, ի գիշերի առաջի Նորա, եւ ոչ խաբեցայ:

Ոչ կամէր մխիթարել անձն իմ. յիշեցի զԱստուած եւ ուրախ եղէ. հոգայի եւ նուաղէր յիս հոգի իմ:

Ժամանեցին պահուց աչք իմ, խռովեցայ եւ ոչ խօսեցայ:

Խորհեցայ զաւուրսն զառաջինս, եւ զամսն յաւիտենից յիշեցի:

Խօսեցայ ի գիշերի ընդ սրտի իմում. հոգայի եւ տառապէր յիս հոգի իմ:

Միթէ յաւիտենից մերժեսցէ՞ զիս Տէր, եւ ո՞չ եւս յաւելուցու ի հաճել եւ եւս:

Կամ իսպա՞ռ արգելցէ զողորմութիւն Իւր յինէն, կամ կատարեա՞ց զբան Իւր ազգէ մինչեւ յազգ:

Կամ մոռասցի՞ գթալ Աստուած իմ եւ եւս, կամ արգելցէ՞ զգթութիւն Իւր բարկութեամբ Իւրով:

ՍԱՂՄՈՍ 76

Իմ ձայնով ես Տիրոջը դիմեցի, իմ ձայնով դիմեցի Աստծուն, եւ Նա նայեց ինձ:

Նեղութեանս օրերին Աստծուն փնտրեցի՝ ձեռքերս գիշերով պարզած Նրա առջեւ, եւ չխաբուեցի:

Անձս չէր ուզում մխիթարուել. յիշեցի Աստծուն եւ ուրախացայ. երբ հառաչում էի, նուաղում էր հոգիս իմ մէջ:

Աչքերն իմ բաց մնացին գիշերուայ պահին, խռովուեցի ու չխօսեցի:

Խորհեցի հին օրերի մասին, եւ վաղնջական տարիները յիշեցի:

Գիշերը սրտիս հետ խօսեցի. հառաչելիս տառապում էր հոգիս իմ մէջ:

Մի՞թէ յաւէտ մերժելո՞ւ է Տէրն ինձ, եւ այլեւս չի՞ շարունակելու բարեհաճ լինել:

Կամ ընդմի՞շտ զրկելու է ինձ Իր ողորմութիւնից, եւ դադարեցնելո՞ւ է խօսքն Իր սերնդից սերունդ.

Կամ այլեւս մոռանալո՞ւ է Աստուած գթալ ինձ, եւ բարկութեամբ մերժելո՞ւ է գթութիւնն Իր:

Ասացի թէ՝ Այժմ սկսայ. այս է նորոգումն աջոյ Բարձրելոյն:

Յիշեցի զգործս Տեառն. ի սկզբանէ յիշեցի զսքանչելիս Նորա:

Խորհեցայ յամենայն գործս Քո, եւ ի ձեռագործս Քո խորհեցայ:

Աստուա՛ծ, ի սրբութեան են ճանապարհք Քո. ո՞վ է աստուած մեծ որպէս զԱստուած մեր:

Դու ես Աստուած՝ որ առնես զսքանչելիս. ցուցեր ժողովրդեան Քում զզօրութիւն Քո:

Փրկեցեր բազկաւ Քով զժողովուրդս Քո՝ զորդիսն Յակովբայ եւ Յովսեփու:

Տեսին զՔեզ ջուրք, Աստուա՛ծ, տեսին զՔեզ ջուրք եւ երկեան, եւ խորք խռովեցան ի ձայնէ ջուրց բազմաց:

Ձայն ետուն ամպք, քանզի եւ նետք Քո գնան ի ձայնէ որոտալոյ Քո անուի:

Երեւեցան փայլատակունք Քո տիեզերաց. խռովեցաւ եւ դողաց երկիր:

Ի ծովու են ճանապարհք Քո, եւ շաւիղք Քո ի ջուրս բազումս, եւ հետք Քո ոչ եւս երեւին:

Առաջնորդեցեր որպէս խաշին ժողովրդեան Քո, ի ձեռն Մովսիսի եւ Ահարոնի:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ յաւիտեանս եւ յաւիտենից. ամէն:

Ասացի. «Այժմ հասկացայ. սա է նորացած աշը Բարձրեալի»:

Յիշեցի գործերը Տիրոջ, սկզբից յիշեցի սքանչելագործութիւնները Նրա:

Մտաբերեցի գործերը Քո բոլոր, եւ Քո ձեռակերտների մասին խորհեցի:

Աստուա՛ծ, Քո ճանապարհները սրբութեան մէջ են. ո՞վ է մեծ աստուած՝ մեր Աստծու նման:

Դո՛ւ ես հրաշագործ Աստուածը. զօրութիւնդ ցոյց տուիր Քո ժողովրդին:

Բազուկովդ փրկեցիր Քո ժողովրդին՝ Յակոբի եւ Յովսէփի որդիներին:

Քեզ տեսան ջրերն, Աստուա՛ծ, տեսան Քեզ ջրերն ու սոսկացին, եւ անդունդները խռովուեցին յորդառատ ջրերի ձայնից:

Ամպերը ձայն տուեցին, եւ Քո նետերը սլացան Քո անուի որոտման ձայնից:

Երեւացին Քո փայլակները տիեզերքի, եւ երկիրը խռովուեց ու դողաց:

Քո ճանապարհները ծովում են, շաւիղներդ՝ յորդառատ ջրերում, եւ Քո հետքերը չեն երեւում:

Քո ժողովրդին ոչխարների պէս առաջնորդեցիր Մովսէսի եւ Ահարոնի ձեռքով:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ՃԼԷ

Խոստովան եղէց Քեզ, Տէ՛ր, բոլորով սրտիւ իմով. առաջի հրեշտակաց սաղմոս ասացից Քեզ, զի լուար զբանս բերանոյ իմոյ:

Երկիրպագից ի տաճար սուրբ Քո, եւ խոստովան եղէց անուան Քում վասն ողորմութեան եւ ճշմարտութեան Քո. մեծ արարեր յամենայնի զանուն սուրբ Քո.

Յորում աւուր կարդամ առ Քեզ վաղվաղակի լուր ինձ, եւ բազում արասցես զզօրութիւնս յանձն իմ:

Խոստովան եղիցին առ Քեզ ամենայն թագաւորք երկրի, զի լուան զբանս բերանոյ Քո, եւ օրհնեսցեն զճանապարհս Քո:

ՔԱՐՈԶ

Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ 137

Գոհութիւն պիտի մատուցեմ Քեզ, Տէ՛ր, իմ ամբողջ սրտով. հրեշտակների առջեւ սաղմոս պիտի երգեմ Քեզ, քանզի լսեցիր խօսքը բերանիս:

Պիտի երկրպագեմ սուրբ տաճարիդ եւ անուանդ գոհութիւն պիտի մատուցեմ՝ Քո ողորմութեան եւ ճշմարտութեան համար. ամէն ինչում մեծ ցոյց տուիր սուրբ անունդ:

Որ օրը որ Քեզ ձայն տամ, իսկոյն լսի՛ր ինձ եւ բազմապատկի՛ր զօրութիւնները անձիս մէջ:

Գոհութիւն պիտի մատուցեն Քեզ աշխարհի բոլոր թագաւորները, քանզի լսեցին Քո բերանի խօսքերը, եւ պիտի օրհնեն Քո ճանապարհները:

Մեծ են փառք Տեառն, բարձր է Տէր, զխոնարհս տեսանէ, եւ զբարձունս ի հեռաստանէ ճանաչէ:

Թէ գնացից ես ի մէջ նեղութեանց, կեցուսցես զիս ի բարկութենէ թշնամւոյն.

Զգեցեր զձեռն Քո, եւ փրկեաց զիս աջ Քո, եւ Տէր հատուսցէ ընդ իմ:

Տէ՛ր, ողորմութիւն Քո յաւիտեան, զգործս ձեռաց Քոց մի՛ անտես առներ:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Մեծ է փառքը Տիրոջ, բարձր է Տէրը, Նա տեսնում է խոնարհներին, իսկ բարձրամիտներին հեռուից ճանաչում:

Երբ անցնեմ նեղութիւնների միջով, Դու կը փրկես ինձ թշնամու զայրոյթից:

Ձեռքդ կը մեկնես, եւ Քո աջը կը փրկի ինձ, եւ Տէրը կը հատուցի իմ փոխարէն:

Տէ՛ր, Քո ողորմութիւնը յաւերժ է, ձեռքիդ գործերը մի՛ անտեսիր:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ՃԻԲ

Առ Քեզ, Տէ՛ր, համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ի յերկինս:

Որպէս աչք ծառայի ի ձեռն տեառն իւրոյ, որպէս աչք աղախնոյ ի ձեռն տիկնոջ իւրոյ. այնպէս են աչք մեր առ Քեզ, Տէ՛ր Աստուած մեր, մինչեւ ողորմեսցիս ի վերայ մեր:

Ողորմեա՛ մեզ, Տէ՛ր, ողորմեա մեզ, զի բազում լցաք արհամարհանօք:

Եւս առաւել լցան անձինք մեր նախատանօք՝ որ նախատէին զմեզ եւ արհամարհանօք ամբարտաւանից:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ 122

Աչքերս դէպի Քեզ բարձրացրի, Տէ՛ր, Դու՝ որ բնակւում ես երկնքում:

Ինչպէս ծառայի աչքերն իր տիրոջ ձեռքին, ինչպէս աղախնի աչքերն իր տիրուհու ձեռքին, այնպէս էլ մեր աչքերն ուղղուած են Քեզ, Տէ՛ր Աստուած մեր, մինչեւ որ գթաս մեզ:

Գթա՛ մեզ, Տէ՛ր, գթա մեզ, քանզի բազում արհամարհանքներ կրեցինք:

Մեր հոգիներն անչափ լցուեցին մեզ անպատուողների նախատինքներով եւ ամբարտաւանների անարգանքով:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԼԷ

Տէ՛ր, մի՛ սրտմտութեամբ Քով յանդիմաներ զիս եւ մի՛ բարկութեամբ Քով խրատեր զիս:

Զի նետք Քո հարան յիս, եւ յիս հաստատեցաւ ձեռն Քո:

Ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ յերեսաց բարկութեան Քո. ոչ է խաղաղութիւն ոսկերաց իմոց յերեսաց մեղաց իմոց:

Անօրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, որպէս բեռն ծանր ծանրացան ի վերայ իմ:

Նեխեցան եւ փտեցան վէրք իմ յերեսաց անըզգամութեան իմոյ:

Տառապեցայ եւ խոնարհ եղէ յոյժ, զօրհանապազ տրտում գնայի, զի անձն իմ լի եղեւ չարչարանօք եւ ոչ գոյ բժշկութիւն մարմնոյ իմոյ:

Զարչարեցայ եւ խոնարհ եղէ մինչեւ յոյժ, մռնչէի առ հեծութեան սրտի իմոյ:

Տէ՛ր, առաջի Քո է ամենայն ցանկութիւն իմ, եւ հեծութիւն իմ ի Քէն ոչ ծածկեցաւ:

Սիրտ իմ խռովեցաւ յիս եւ եթող զիս զօրութիւն իմ, լոյս աչաց իմոց՝ եւ այս ո՛չ եղեւ ընդ իս:

Բարեկամք իմ եւ մերձաւորք իմ առաջի իմ մերձեցան եւ կացին, եւ մերձաւորք իմ հեռի եղեն յինէն:

ՍԱՂՄՈՍ 37

Տէ՛ր, Քո զայրոյթով մի՛ յանդիմանիր ինձ եւ Քո բարկութեամբ ինձ մի՛ խրատիր:

Քանզի Քո նետերն ինձ հարուածեցին, եւ Քո ձեռքն ինձ վրայ ծանրացաւ:

Մարմնիս համար բուժում չկայ Քո բարկութեան երեսից. ոսկորներս հանգստութիւն չունեն իմ մեղքերի պատճառով:

Անօրէնութիւններս գլխիցս վեր բարձրացան, սաստիկ բեռան պէս ծանրացան վրաս:

Վէրքերն իմ նեխեցին ու փտեցին անըզգամութեանս հետեւանքով:

Տառապեցի եւ խիստ խոնարհուեցի, գիշերցերեկ շրջեցի վշտացած, քանզի անձս լցուեց տանջանքներով, եւ մարմնիս համար բուժում չկայ:

Զարչարուեցի եւ սաստիկ խոնարհ եղայ, մռնչացի սրտիս հեծութիւնից:

Տէ՛ր, իմ բոլոր ցանկութիւնները առջեւդ են, եւ հառաչանքս չծածկուեց Քեզնից:

Սիրտս խռովուեց իմ մէջ, եւ զօրութիւնն իմ լքեց ինձ, աչքերիս մէջ լոյսի նշոյլ իսկ չմնաց:

Բարեկամներս եւ ընկերներս մօտեցան ու կանգնեցին իմ առջեւ, եւ մերձաւորներս ինձնից հեռու մնացին:

Բռնադատէին զիս եւ խնդրէին զանձն իմ, ոյք խորհէին չար ի վերայ իմ, խօսեցան զանօրէնութիւն եւ զնենգութիւն զօրհանապազ խորհեցան:

Այլ ես որպէս խուլ՝ զի ոչ լսէ, որպէս համր՝ որ ոչ բանայ զբերան իւր:

Եղէ ես որպէս մարդ՝ որ ոչ լսէ, եւ ոչ գոն խօսք ի բերան նորա:

Ես ի Քե՛զ, Տէր, յուսացայ, եւ Դու լուիցես ինձ, Տէ՛ր Աստուած իմ:

Ասացի թէ՝ Մի՛ ուրախ եղիցին յիս թշնամիք իմ. ի սասանել ոտից իմոց՝ ի վերայ իմ մեծամեծս խօսեցան:

Ես ի տանջանս պատրաստ եմ, եւ ցաւք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Զանօրէնութիւնս իմ պատմեցից եւ հոգացայց վասն մեղաց իմոց:

Իսկ արդ թշնամիք իմ կենդանի են եւ զօրացեալ են քան զիս, եւ բազումք էին, ոյք ատէին զիս ի տարապարտուց:

Ոյք հատուցին ինձ չար փոխանակ ընդ բարւոյ, չարախօսէին զինէն, զի ես երթայի զհետ արդարութեան:

Ինձ հետապնդողները բռնադատեցին ինձ, իմ դէմ չարիք նիւթողները անօրէնութիւն խօսեցին, եւ գիշեր-ցերեկ նենգութիւն մտածեցին:

Իսկ ես դարձայ ինչպէս խուլ՝ որ չի լսում, ինչպէս համր՝ որ բերանն իր չի բացում:

Ես դարձայ ինչպէս մարդ, որ չի լսում, եւ որի բերանում խօսք չկայ:

Ես յոյսս Քեզ վրայ դրի, Ո՛վ Տէր, ու Դու կը լսես ինձ, Տէ՛ր իմ Աստուած:

Ասացի. «Թող թշնամիներս չծիծաղեն վրաս». երբ ոտքս սայթաքեց, նրանք յոխորտացին իմ դէմ:

Ես պատրաստ եմ տանջանքների, եւ իմ ցաւերը միշտ առջեւս են:

Կը պատմեմ իմ անօրէնութիւնները եւ կը խորհեմ իմ մեղքերի մասին:

Բայց թշնամիներն իմ ողջ են ու աւելի հզօր, քան ես, եւ բազմացել են նրանք, ովքեր յանիրաւի ատում են ինձ:

Ովքեր ինձ չարութեամբ հատուցեցին բարու փոխարէն եւ չարախօսեցին իմ մասին, քանզի ես արդարութեամբ էի ընթանում:

Մի՛ թողուր զիս, Տէ՛ր Աստուած իմ, եւ մի՛ ի բացեայ առնիր յինէն. հայեա՛ց յօգնել ինձ, Տէ՛ր փրկութեան իմոյ:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ յաւիտեանս եւ յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ՃԻԱ

Ուրախ եղէ ես ոյք ասէին ցիս՝ Ի տուն Տեառն երթիցուք մեք:

Հասեալ կային ոտք մեր առ դրունս քո, Երուսաղէմ:

ԶԵրուսաղէմ շինեալ որպէս քաղաք, եւ բնակութիւն իւր շուրջ զնովաւ:

Մի՛ լքիր ինձ, Տէ՛ր իմ Աստուած, եւ մի՛ հեռացիր ինձնից. ո՛ւշ դարձրու, որ ինձ օգնես, Ո՛վ իմ Փրկիչ Տէ՛ր:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութիւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ 121

Ուրախանում էի, երբ ասում էին ինձ. «Գնանք Տիրոջ տուն»:

Մեր ոտքերը հասել կանգնել էին քո դռներին, ո՛վ Երուսաղէմ:

Երուսաղէմը բարեշէն է որպէս քաղաք, եւ նրա բնակիչներն իր շուրջն են:

Անդ ելին ազգք, ազգք Տեառն, վկայութիւն Իսրայելի խոստովան լինել անուան Տեառն:

Անդ արկեալ են աթոռք դատաստանի, աթոռս արկեալ են ի տան Դաւթի:

Հարցէք զողջունէ զԵրուսաղէմի եւ զշինութենէ՝ ոյք սիրէք զնա:

Եղիցի խաղաղութիւն ի զօրութեան քում, շինութիւն յաշտարակս յամուրս քո:

Վասն եղբարց եւ ընկերաց իմոց խօսեցայ զխաղաղութիւն, վասն քոյ եւ վասն տան Տեառն Աստուծոյ մերոյ խնդրեցաք զբարութիւն ի քէն:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ յաւիտեանս եւ յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք. ընկա՛լ, կեցո՛ եւ ողորմեա՛:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ազգերն այնտեղ բարձրացան, ազգերը Տիրոջ, որ Իսրայելի վկայութեամբ գոհութիւն մատուցեն Տիրոջ անուանը:

Այնտեղ են դրուած դատաստանի աթոռները՝ աթոռներ՝ դրուած Դաւթի տան մէջ:

Հարցրէ՛ք Երուսաղէմի խաղաղութեան ու շէնութեան մասին, դուք՝ բոլորդ, որ սիրում էք այն:

Քո ամրութիւններում թող խաղաղութիւն լինի, եւ քո բերդերի աշտարակներում՝ շէնութիւն:

Ի սէր իմ եղբայրների եւ ընկերների քեզ խաղաղութիւն մաղթեցի. եւ մեր Տէր Աստծու տան համար եւ քեզ՝ բարութիւն ցանկացանք:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Նաեւ խաղաղութեան համար աղաչենք Տիրոջը. ընդունի՛ր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ՄԱՂԹԱՆՔ

Օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՔԱՐՈԶ

Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի Տեառնէ, զի զողորմութեան զշնորհս Իւր արասցէ ի վերայ մեր:

Տէրն ամենակալ կեցուսցէ եւ ողորմեսցի:

Կեցո՛, Տէ՛ր. Տէ՛ր ողորմեա՛. Տէ՛ր ողորմեա՛. Տէ՛ր ողորմեա՛.

ԱՂՕԹՔ

Աստուած բարերար եւ ողորմութեանց պարգեւիչ, ընկալ զդարձ մեղուցեալ ծառայից Քոց, որք ուղեւորեցան զհետ երկնաւոր կոչմանդ՝ զոր աւետարանեցեր անսուտ բանիւդ, եթէ՝ Եկա՛յք առ իս, ամենայն աշխատեալքդ եւ բեռնաւորքդ՝ եւ ես հանգուցից զձեզ: Եւ արդ, ի ձեռն հայցմանս եւ խնդրուածոցս ի Քէն, Տէ՛ր, լո՛ւր աղաչանաց մերոց եւ զխոստովանութիւնս սրտից մերոց ընկա՛լ. եւ սրբեա՛ զմիտս եւ զզգայարանս մեր՝ պաշտել զՔեզ սրբութեամբ եւ արդարութեամբ զամենայն աւուրս կենաց մերոց: Պարգեւեա՛ զզղջումն ապաշխարութեան՝ հանդերձ բխմամբ արտասուաց, զի եղիցուք տաճար հոգւոյդ Քում սրբոյ,

ՔԱՐՈԶ

Հաւատով միաբան խնդրենք Տիրոջից, որ Իր ողորմութեան շնորհները պարգեւի մեզ:

Ամենակալ Տէրը թող ապրեցնի եւ ողորմի մեզ:

Ապրեցրո՛ւ, Տէ՛ր. Տէ՛ր ողորմի՛ր. Տէ՛ր ողորմի՛ր. Տէ՛ր ողորմի՛ր:

ԱՂՕԹՔ

Բարերար եւ ողորմութիւններ պարգեւող Աստուած, ընդունիր դարձը Քո մեղաւոր ծառաների, որոնք հետեւեցին Քո երկնաւոր կանչին, որ աւետարանեցիր Քո անսուտ խօսքով. «Եկէ՛ք ինձ մօտ, բոլոր յոգնածներդ ու բեռնաւորուածներդ, եւ ես ձեզ կհանգստացնեմ»:

Եւ այժմ, Քեզ ուղղուած հայցուածքների եւ խնդրուածքների շնորհիւ, լսի՛ր, Տէ՛ր, մեր աղաչանքները, ընդունիր մեր սրտի խոստովանութիւնը. եւ սրբի՛ր մեր մտքերն ու զգայարանները՝ պաշտելու Քեզ սրբութեամբ եւ արդարութեամբ մեր կեանքի բոլոր օրերում: Պարգեւիր ապաշխարութեան զղջում՝ արտասուքների բըխմամբ, որպեսզի Քո Սուրբ Հոգու տաճարը լինենք,

որ կամակից եւ օգնականդ ես սրբոց Քոց՝ ի հանդիսի ճգնութեան իւրեանց:

Քահանայապե՛տ մշտնջենաւոր, որ եկիր ի խնդիր մոլորելոյն Ադամայ եւ զտկարացեալն ի չարաթոյն վիշապէն փրկեցեր բերկրարար պատուական երկոքումբք դահեկանօք, զոր ցպանդոկապետն աւանդեցեր, բերելով զհատուցումն անճառ, խորին՝ միւսանգամ գալստեանն Քո, յորժամ հատուցանես խնդրողացս ի Քէն զնորոգումն անանց բարեացդ՝ յորոց փառաւորի Ամենասուրբ Երրորդութիւնդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն, Աստուծո՛յ երկրպագեսցուք.

Աստուա՛ծ բազումողորմ՝ գթած եւ երկայնամիտ, քաղցր եւ անոխակալ, որ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան եւ խոնարհիս յաղաչանս ծառայից Քոց՝ որք կարդան առ Քեզ եւ խնդրեն ի Քէն զքաւութիւն եւ զթողութիւն մեղաց իւրեանց:

Թո՛ղ սոցա զմեղս եւ զյանցանս, զի բաց ի Քէն այլ ո՛չ գոյ աստուած, եւ Դու միայն կարող ես թողուլ զմեղս. եւ Քեզ վայելէ փա՛ռք եւ

որ կամակից եւ օգնական ես Քո սրբերին՝ իրենց ճգնութեամբ:

Մշտնջենաւո՛ր Քահանայապետ, որ եկար փնտրելու մոլորուած Ադամին եւ տկարացածին փրկեցիր չարաթոյն վիշապից՝ բերկրարար պատուական երկու դահեկանով, որ աւանդեցիր պանդոկապետին, խոստանալով տալ անճառ, խորին հատուցումը՝ Քո միւս անգամ գալստեանը, երբ կը հատուցես անանց բարիքներդ Քեզանից նորոգում խնդրողներին՝ որոնցից փառաւորւում է Ամենասուրբ Երրորդութիւնդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ամենքին խաղաղութիւն,
Աստծո՛ւն երկրպագենք.

Աստուա՛ծ բազումողորմ՝ գթած եւ երկայնամիտ, քաղցր եւ անոխակալ, որ ցաւում ես մարդկանց չարիքների համար եւ խոնարհւում՝ լսելու Քո ծառաների աղաչանքները, որոնք կանչում են Քեզ եւ խնդրում Քեզանից իրենց մեղքերին քաւութիւն եւ թողութիւն: Ների՛ր սրանց մեղքերն ու յանցանքները, քանզի Քեզանից բացի այլ աստուած գոյութիւն չո՛ւնի, եւ միայն Դո՛ւ կարող ես ներել մեղքերը. եւ Քեզ վայել է փա՛ռք եւ

իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէլուիա՛, ալէլուիա՛.

ՍԱՂՄՈՍ Ծ

Կ8. Ցողեա՛յիս մշտկաւ՝ եւ սուրբ եղէց. լուա՛, եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Փխ. Ողորմեա՛ ինձ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան Քում, ըստ բազում գթութեան Քում քաւեա զանօրէնութիւնս իմ:

Առաւել լուա զիս յանօրէնութենէ իմմէ, եւ ի մեղաց իմոց սո՛ւրբ արա զիս:

Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, եւ մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ:

Քեզ միայն մեղայ, Տէ՛ր, եւ չար առաջի Քո արարի:

Որպէս արդար եղիցիս ի բանս Քո, եւ յաղթող՝ ի դատել Քեզ:

Անօրէնութեամբ յղացաւ եւ ի մեղս ծնաւ զիս մայր իմ:

Դու, Տէ՛ր, զճշմարտութիւն սիրեցեր,

իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէլուիա՛, ալէլուիա՛.

ՍԱՂՄՈՍ 50

ԿՁ. Ցողի՛ր ինձ մշտիկով՝ եւ մաքուր կը լինեմ. լուա՛, եւ ձիւնից էլ սպիտակ կը լինեմ:

ՓԽ. Ողորմի՛ր ինձ, Աստուա՛ծ, ըստ Քո մեծ ողորմութեան, ըստ Քո առատ գթութեան քաւի՛ր անօրէնութիւններն իմ:

Առաւել լուա ինձ ի՛մ անօրէնութիւններից եւ մաքրի՛ր ինձ ի՛մ մեղքերից:

Իմ անօրէնութիւնները ես ինքս գիտեմ, եւ իմ մեղքերն իմ առջեւ են ամեն ժամ:

Քո դէմ միայն մեղանչեցի, Տէ՛ր, եւ Քո առջեւ չարիք գործեցի:

Այնպէս որ արդար կը լինես Քո խօսքերում եւ յաղթող՝ դատելիս:

Անօրէնութեամբ յղացաւ եւ մեղքի մէջ ծնեց ինձ մայրն իմ :

Դու, Տէ՛ր, ճշմարտութիւնը սիրեցիր,

զանյայտս եւ զծածկեալս իմաստութեամբ Քով յայտնեցեր ինձ:

Ցօղեա՛ յիս մշտկաւ՝ եւ սուրբ եղէց. լուա՛, եւ քան զձիւն սպիտակ եղէց:

Լսելի արա ինձ, Տէ՛ր, զցնծութիւն եւ զուրախութիւն, եւ ցնծասցեն ոսկերք իմ տառապեալք:

Դարձո՛ զերեսս Քո ի մեղաց իմոց եւ զամենայն անօրէնութիւնս իմ քաւեա յինէն:

Սիրտ սուրբ հաստատեա յիս, Աստուա՛ծ, եւ հոգի ուղիղ նորոգեա ի փորի իմում:

Մի՛ ընկենուր զիս, Տէ՛ր, յերեսաց Քոց, եւ զՀոգի Քո Սուրբ մի՛ հաներ յինէն:

Տո՛ւր ինձ ցնծութիւն փրկութեան, Հոգւով պետութեամբ Քով հաստատեա զիս:

Ուսուցից անօրինաց զճանապարհս Քո, եւ ամպարիշտք առ Քեզ դարձցին:

Փրկեա՛ զիս յարենէ, Աստուա՛ծ, Աստուած փրկութեան իմոյ, եւ ցնծասցէ լեզու իմ յարդարութեան Քում:

Տէ՛ր, եթէ զշրթունս իմ բանաս, բերան իմ երգեսցէ զօրհնութիւնս Քո:

Թէ կամեցեալ էիր պատարագս՝ մատուցանէաք, բայց Դու ընդ ողջակէզս իսկ ո՛չ հաճեցար:

անյայտներն ու ծածկուածները Քո իմաստութեամբ յայտնեցիր ինձ:

Ցողի՛ր ինձ մշտիկով՝ եւ մաքուր կը լինեմ. լուա՛, եւ ձիւնից էլ սպիտակ կը լինեմ:

Լսել տուր ինձ, Տէ՛ր, ցնծութիւն եւ ուրախութիւն, եւ կը ցնծան ոսկորներն իմ տառապած:

Դարձրո՛ւ երեսդ իմ մեղքերից եւ քաւիր իմ բոլոր անօրէնութիւնները:

Սուրբ սիրտ հաստատիր իմ մէջ, Աստուա՛ծ, եւ ուղիղ հոգի նորոգիր իմ ներսում:

Մի՛ զրկիր ինձ, Տէ՛ր, Քո երեսից եւ մի՛ հանիր ինձնից Քո Սուրբ Հոգին:

Տուր ինձ Քո փրկութեան ցնծութիւնը եւ տիրական Հոգով զօրացրու ինձ:

Անօրէններին կը սովորեցնեմ Քո ճանապարհները, եւ ամբարիշտները առ Քեզ կը դառնան:

Փրկի՛ր ինձ արիւնից, Աստուա՛ծ, Աստուած իմ փրկութեան եւ կը ցնծայ իմ լեզուն Քո արդարութեամբ:

Տէ՛ր, եթէ իմ շուրթերը բանաս, իմ բերանը կը երգի Քո օրհնութիւնները:

Թէ կամենայիր զոհեր՝ կը մատուցէինք, բայց ողջակէզներն իսկ Քեզ հաճելի չեղա՛ն:

Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ:

Բարի արա, Տէ՛ր, կամօք Քովք Սիոնի, եւ շինեսցին պարիսպքն Երուսաղէմի:

Յայնժամ հաճեսցիս ընդ պատարագս արդարութեան, յորժամ ուխտից պատարագս հանցեն ի սեղան Քո զուարակս:

Փա՜ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ընթերցուածս յԵսայեայ մարգարէէ.
(գլ. 1:16 - 20)

Լուացարո՛ւք, սրբեցարո՛ւք. ընկեցէ՛ք զչարիս ձեր յանձանց ձերոց առաջի աչաց իմոց. դադարեցէ՛ք ի չարեաց ձերոց: Ուսարո՛ւք զբարիս գործել. խնդրեցէ՛ք զիրաւունս, փրկեցէ՛ք զզրկեալն, դա՛տ արարէք որբոյն եւ տո՛ւք իրաւունս այրւոյն:

Եւ եկայք խօսեցարուք ընդ միմեանս, - ասէ Տէր, - եւ եթէ իցեն մեղք ձեր իբրեւ զձանձախարիթ՝ իբրեւ զձիւն սպիտակ արարից. եւ եթէ իցեն իբրեւ զորդան կարմիր՝ որպէս զասր սուրբ արարից: Եւ եթէ ախորժեսջիք եւ լուիջիք ինձ՝ զբարութիւնս երկրի կերիջիք: Ապա, եթէ

Զոհն Աստծուն՝ խոնարհ հոգին է, սուրբ սիրտն ու խոնարհ հոգին Աստուած չի արհամարհում:

Բարի արա, Տէ՛ր, Քո կամքով Սիոնին, եւ թող շինուեն Երուսաղէմի պարիսպները:

Այնժամ կը հաճես արդարութեան պատարագները, երբ զուարակները որպէս ուխտի պատարագներ կմատուցուեն Քո սեղանին:

Փա՜ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ընթերցուածքը Եսայիի մարգարէութիւնից է.
(գլ. 1:16 - 20)

Լուացուեցէ՛ք, մաքրուեցէ՛ք. իմ աչքի առաջ ձեր չար արարքները թօթափեցէ՛ք ձեզանից. վե՛րջ տուէք ձեր չարագործութիւններին:

Սովորեցէք բարի՛ք գործել, արդարութի՛ւն փնտրեցէք, փրկեցէ՛ք զրկուածին, արդարադա՛տ եղէք որբի հանդէպ, իրաւո՛ւնք տուէք այրուն:

Եկէ՛ք խօսենք իրար հետ, - ասում է Տէրը, - եթէ ձեր մեղքերը արեան պէս կարմիր են՝ ապա ես ձեան պէս ճերմակ կը դարձնեմ, եթէ որդան կարմիր լինեն՝ կը սպիտակեցնեմ ինչպէս բուրդ:

Եւ եթէ յօժար լինէք ու լսէք ինձ՝ դուք կը ճաշակէք երկրի բարիքները. իսկ եթէ

ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ, քանզի բերան Տեառն խօսեցաւ զայս:

Ընթերցուածս յԵզեկիէլի մարգարէէ.
(գլ. 18:20 - 23)

Արդարութիւն արդարոյն ի վերայ նորին եղիցի, եւ անօրէնութիւն անօրինին ի վերայ նորին եղիցի: Եւ անօրէնն եթէ դարձցի յամենայն անօրէնութեանց իւրոց զոր արար, եւ պահեսցէ զամենայն պատուիրանս իմ, եւ արասցէ արդարութիւն եւ ողորմութիւն՝ կելով կեցցէ եւ մի՛ մեռանիցի: Ամենայն յանցանք նորա զոր գործեալ իցէ, եւ ամենայն անիրաւութիւնք նորա զոր անիրաւեալ իցէ՝ մի՛ յիշեսցին, այլ արդարութեամբ իւրով զոր արար, կեցցէ:

Միթէ կամելով կամիցի՞մ զմահ մեղաւորին, - ասէ Տէր Տէր, - որպէս զդառնալ նորա ի չար ճանապարհէ՝ եւ կեալ:

Պօղոսի առաքելոյն յԵփեսացւոց թղթոյն է
ընթերցուածս. (գլ. 6:10 - 24)

Այսուհետեւ զօրացարո՛ւք Տէրամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա:

չկամենաք ինձ լսել, սո՛ւրը պիտի ուտի ձեզ, քանզի Տիրոջ շուրթերն ասացին այս:

Ընթերցուածքը Եզեկիէլի մարգարէութիւնից է.
(գլ. 18:20 - 23)

Արդարի արդարութի՛ւնն է իր վրայ ընկնելու, անօրէնի անօրէնութիւնը՝ իր վրայ:

Անօրէնը եթէ յետ կանգնի իր գործած անօրէնութիւններից ու պահի իմ բոլոր պատուիրանները, արդարութիւն գործի ու ողորմութիւն անի՝ ապրելով ապրելու է ու չի մեռնելու: Նրա գործած բոլոր մեղքերը, կատարած բոլոր անիրաւութիւնները չեն յիշուելու, այլ իր գործած արդարութեան համար նա ապրելու է:

Մի՞թէ ես մեղաւորի մահն եմ տենչում, - ասում է Տէր Աստուածը, - եւ ոչ թէ այն՝ որ նա չար ճանապարհից յետ դառնայ ու ապրի:

Ընթերցուածքը Պօղոս առաքեալի՝ եփեսացիներին ուղղուած թղթից է. (գլ. 6:10 - 24)

Եւ վերջապէս զօրացէ՛ք Տիրոջով եւ նրա զօրութեան կարողութեամբ:

Եւ զգեցարո՛ւք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք կալ ընդդէմ հնարից սատանայի: Զի ո՛չ է մեզ պատերազմ ընդ մարմնոյ եւ ընդ արեան, այլ ընդ իշխանութիւնս, եւ ընդ պետութիւնս, եւ ընդ աշխարհակալս խաւարիս այսորիկ, ընդ այս չարութեան՝ որք են ի ներքոյ երկնից:

Վասն այսորիկ առէ՛ք զսպառազինութիւնն Աստուծոյ, զի կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան: Եւ իբրեւ զամենայն ինչ կատարիցէք, հաստատո՛ւն կացէք, զտեղի կալջիք, պնդեալ զմէջս ձեր ճշմարտութեամբ, եւ զգեցեալ զզրահն արդարութեան. եւ ագուցեալ զոտս պատրաստութեամբ Աւետարանին խաղաղութեան:

Եւ ի վերայ ամենայնի առէ՛ք զվահանն հաւատոյ, որով կարող լինիջիք զամենայն նետս մուխս չարին շիջուցանել: Եւ առէ՛ք զսաղաւարտն փրկութեան եւ զսուսեր Հոգւոյն, որ է Բանն Աստուծոյ: Ամենայն աղօթիւք եւ խնդրուածովք աղօթս առնել յամենայն ժամանակի Հոգւով, եւ ի նոյն տքնեսջիք ամենայն ժուժկալութեամբ եւ խնդրուածովք վասն ամենայն սրբոց: Եւ վասն իմ,

Եւ Աստուծոյ սպառազինութիւնը հագէ՛ք, որպէսզի կարողանաք ընդդիմանալ սատանայի հնարանքներին: Որովհետեւ մեր պատերազմը մարմնի եւ արեան հետ չէ, այլ՝ իշխանութիւնների հետ, պետութիւնների հետ, այս խաւար աշխարհի տիրակալների հետ եւ երկնքի տակ եղող չար ոգիների հետ:

Ուստի առէ՛ք Աստուծոյ սպառազինութիւնը, որպէսզի կարողանաք չար օրում դէմ կանգնել չարին: Եւ երբ ամէն ինչ կատարէք, հաստատո՛ւն կացէք՝ տեղում պինդ կանգնած, ձեր մէջքերը գօտեպնդած ճշմարտութեամբ, եւ հագած արդարութեան զրահը. ձեր ոտքերը ամրացրէ՛ք խաղաղութեան Աւետարանի պատրաստութեամբ:

Եւ այս բոլորի վրայ առէ՛ք հաւատի վահանը, որով պիտի կարողանաք հանգցնել չարի բոլոր մխացող նետերը: Եւ առէ՛ք փրկութեան սաղաւարտն ու Հոգու սուսերը, որ է Աստուծոյ խօսքը: Ամենայն աղօթքներով եւ աղաչանքներով ամէն ժամ աղօթեցէ՛ք Հոգով. եւ այդ բանի մէջ հսկեցէ՛ք անխոնջ յարատեւութեամբ եւ աղաչանքներով բոլոր սրբերի համար, նաեւ ինձ համար,

զի ինձ տացի բան ի բանալ բերանոյ իմոյ՝ համարձակութեամբ ցուցանել զխորհուրդ Աւետարանին. վասն որոյ պատգամաւորիմ կապանօքս, զի նովին համարձակեցայց, որպէս եւ պարտ իցէ ինձ խօսել: Բայց զի գիտիցէք եւ դուք զինէն զինչ գործիցեմ, զամենայն ինչ ցուցցէ ձեզ Տիւքիկոս՝ սիրելի եղբայր եւ հաւատարիմ պաշտօնեայ ի Տէր. զոր առաքեցի առ ձեզ դմին իրի, զի գիտասջիք դուք զմէնջ, եւ մխիթարեսցէ զսիրտս ձեր:

Խաղաղութիւն ընդ եղբարս, եւ սէր հաւատովքն հանդերձ յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ: Շնորհք ընդ ամենեսին՝ ոյք սիրեն զՏէր մեր Յիսուս Քրիստոս անեղծութեամբ. ամէն:

Ալէլուիա՛, ալէլուիա՛.

ՍԱՂՄՈՍ ԼԱ

Երանի՛, ում թողութիւն եղեւ մեղաց, եւ ծածկեցան ամենայն յանցանք նորա:

Երանի՛ առն, որում ոչ համարեսցի Տէր զմեղս նորա, եւ ոչ գոյ նենգութիւն ի բերան նորա:

որպէսզի ինձ խօսք տրուի իմ բերանը բանալու՝ համարձակութեամբ ցոյց տալու համար Աւետարանի խորհուրդը, որի պատգամաւորն եմ ես այս կապանքներով, որպէսզի իմ այս վիճակում համարձակուեմ խօսել, ինչպէս որ պարտաւոր եմ խօսել: Բայց որպէսզի դուք էլ գիտենաք իմ մասին, թէ ինչ եմ անում, Տիւքիկոս սիրելի եղբայրը եւ Տիրոջ հաւատարիմ պաշտօնեան ձեզ ամէն ինչ կը տեղեկացնի այդ մասին. նրան ուղարկեցի ձեզ մօտ, որպէսզի դուք տեղեակ լինէք մեր մասին, եւ նա մխիթարի ձեր սրտերը:

Խաղաղութիւն եղբայրներին եւ սէր հաւատով հանդերձ՝ Հայր Աստծուց եւ Տէր Յիսուս Քրիստոսից: Շնորհ բոլոր նրանց՝ որոնք սիրում են մեր Տէր Յիսուս Քրիստոսին անեղծութեամբ. ամէն:

Ալէլուիա՛, ալէլուիա՛.

ՍԱՂՄՈՍ 31

Երանի՛ նրան, ում մեղքերին թողութիւն տրուեց, եւ ում բոլոր յանցանքները ծածկուեցին:

Երանի՛ այն մարդուն, որին Տէրն այլեւս մեղաւոր չի համարում, եւ որի բերանում նենգութիւն չկա:

Լռեցի ես, եւ մաշեցան ամենայն ոսկերք իմ՝ առ աղաղակել ինձ առ Տէր զօրհանապազ՝ ի տուէ եւ ի գիշերի:

Ծանրացաւ ձեռն Քո ի վերայ իմ, դարձայ ի թշուառութիւն՝ զի հարան յիս փուշք:

Զմեղս իմ ցուցից Քեզ, եւ զանօրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ի Քէն:

Ասացի թէ՝ Պատմեցից ինձէն զմեղս իմ, եւ Դու թողցես զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց:

Վասն այսորիկ յաղօթս կացցեն առ Քեզ ամենայն սուրբք ի ժամ ընդունելի.

Բայց միայն ի ջուրցն հեղեղաց բազմաց, որ առ նոսա ինչ ոչ մերձեսցին:

Դո՛ւ ես ապաւէն իմ ի նեղութենէ յայսմանէ, որ շուրջ եղեն զինեւ:

Ցնծութիւ՛ն իմ, փրկեա զիս յայնցանէ, ոյք պաշարեցին զիս:

Իմաստուն արարից զՔեզ եւ խելամուտ ի ճանապարհի յոր եւ գնասցես, եւ հաստատեցից ի վերայ քո զաչս իմ:

Մի՛ լինիք որպէս զձիս եւ զջորիս զի ոչ գոյ ի նոսա իմաստութիւն. ի սանձս եւ ի դանդանաւանդս ճմլեսցես զկզակս նոցա, որ առ քեզ ինչ ոչ մերձենան:

Ես լռեցի, եւ իմ բոլոր ոսկորները մաշուեցին՝ ամէն օր գիշեր-ցերեկ Տիրոջը կանչելուց:

Քո ձեռքը ծանրացաւ ինձ վրայ, ես կրկին ընկայ թշվառութեան մէջ՝ քանզի փշերն ինձ ծակեցին:

Մեղքերս Քեզ ցոյց կը տամ եւ անօրէնութիւնս չեմ ծածկի Քեզնից:

Ասացի, թէ՝ Կը խոստովանեմ մեղքերն իմ, եւ Դու թողութիւն կը տաս իմ մեղքերի ողջ ամբարշտութեանը:

Դրա համար բոլոր սուրբերը հարմար ժամին աղօթքի կը կանգնեն Քո առջեւ.

Եւ սաստիկ ջրհեղեղների ժամանակ նրանց ոչինչ չի պատահի:

Դո՛ւ ես իմ ապաւէնն այն նեղութեան մէջ, որը շուրջս պատեց:

Ո՛վ ցնծութիւն իմ, փրկի՛ր ինձ նրանցից, ովքեր պաշարեցին ինձ:

«Քեզ կիմաստնացնեմ ու խելամիտ կը դարձնեմ քո ընթացած ճանապարհին եւ աչքերս վրադ կը պահեմ», - ասում է Տէրը:

Մի՛ եղէք ձիերի եւ ջորիների պէս որոնք իմաստութիւն չունեն, սանձով ու պախուրցով պէտք է նրանց կզակը ճմլել, որ քեզ չմօտենան:

Բազում տանջանք են մեղաւորաց, բայց ոյք յուսան ի Տէր՝ ողորմութիւն Տեառն շուրջ եղիցի զնոքօք:

Ուրա՛խ եղերուք եւ ցնծացէ՛ք, արդա՛րք ի Տէր. պարծեցարո՛ւք ամենեքեան ոյք ուղիղ էք սրտիւք:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէլուիա՛, օրթի՛
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝
որ ըստ Ղուկասու.
(գլ. 15:11 - 32).

զՏէրն մեր Յիսուս Քրիստոս.

Եւ ասէ՝ Առն միոջ էին երկու որդիք: Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն՝ Հա՛յր, տո՛ւր ինձ բաժին, որ անկանի յընչիցդ: Եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Եւ յետ ոչ բազում աւուրց, ժողովեալ ամենայն կրտսեր որդւոյն՝ գնաց յաշխարհ հեռի. եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Եւ իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ, եւ սկսաւ ինքն չքաւորել:

Շատ են մեղաւորների տանջանքները, բայց ովքեր իրենց յոյսը դրել են Տիրոջ վրա, Տիրոջ ողորմութիւնը կը պարուրի նրանց:

Ուրա՛խ եղէք եւ ցնծացէք Տիրոջով, ո՛վ արդարներ. պարծեցէ՛ք բոլորդ որ ուղիղ էք սրտով:

Փա՛ռք Հօր եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէլուիա՛, օրթի՛.
Յիսուս Քրիստոսի Սուրբ Աւետարանը՝ ըստ Ղուկասի.
(գլ. 15:11 - 32)

Մեր Տէր Յիսուս Քրիստոսը.

Եւ ասաց. «Մի մարդ երկու որդի ունէր: Նրանցից կրտսերը հօրն ասաց. «Հա՛յր, տո՛ւր քո ունեցուածքից ինձ ընկնող բաժինը»: Եւ նա ունեցուածքը բաժանեց նրանց: Քիչ օրեր յետոյ, կրտսեր որդին, փողի վերածելով ամէն ինչ, գնաց հեռու աշխարհ, եւ այնտեղ վատնեց իր ունեցուածքը, որովհետեւ անառակ կեանքով էր ապրում: Եւ երբ ամէն ինչ սպառեց, այդ երկրում սաստիկ սով եղաւ, եւ նա սկսեց չքաւոր դառնալ:

Եւ գնացեալ յարեցաւ ի մի ոմն ի քաղաքացւոց աշխարհին այնորիկ. եւ յղեաց զնա յագարակ իւր արածել զխոզս: Եւ ցանկայր լնուլ զորովայն իւր յեղջերէն զոր խոզքն ուտէին, եւ ոչ ոք տայր նմա: Եւ եկեալ ի միտս իւր, ասէ՝ Քանի՛ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, եւ ես աստ սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնացից առ հայր իմ եւ ասացից ցնա՝ Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո եւ ո՛չ եւս եմ արժանի կոչիլ որդի քո, արա զիս իբրեւ զմի ի վարձկանաց քոց: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր: Եւ մինչդեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն եւ գթացաւ. յարեաւ եւ ընթացաւ ընդ առաջ, անկաւ զպարանոցաւն նորա եւ համբուրեաց զնա: Եւ ասէ ցնա որդին՝ Հա՛յր, մեղա յերկինս եւ առաջի քո, ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայս իւր՝ Վաղվաղակի հանէ՛ք զպատմուճանն առաջին եւ ագուցէ՛ք նմա, եւ տո՛ւք զմատանին ի ձեռս նորա, եւ կօշիկս յոտս նորա, եւ ածէ՛ք զեզն պարարակ, զենէ՛ք, կերիցուք եւ ուրախ լիցուք, զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկեաց, կորուսեալ էր եւ գտաւ: Եւ սկսան ուրախ լինել: Եւ էր երէց որդի նորա յագարակի. եւ մինչդեռ

Գնաց դիմեց այդ երկրի քաղաքացիներից մէկին, եւ սա ուղարկեց նրան իր ագարակը՝ խոզեր արածեցնելու: Եւ նա ցանկանում էր իր որովայնը լցնել եղջերենու պտղով, որ խոզերն էին ուտում, բայց ոչ ոք այդ նրան չէր տալիս: Ապա խելքի եկաւ եւ ասաց. «Քանի՜ վարձու աշխատաւորներ կան իմ հօր տանը, որ առատ հաց ունեն, եւ ես այստեղ սովամահ կորչում եմ: Վեր կենամ գնամ իմ հօր մօտ եւ նրան ասեմ. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու քո առաջ եւ այլեւս արժանի չեմ քո որդին կոչուելու, ինձ վերցրո՛ւ իբրեւ քո աշխատաւորներից մէկը»: Եւ վեր կացաւ եկաւ իր հօր մօտ: Եւ մինչ դեռ հեռու էր, հայրը տեսաւ նրան եւ գթաց. վեր կացաւ եւ վազեց նրան ընդառաջ, ընկաւ նրա պարանոցով եւ համբուրեց նրան: Եւ որդին ասաց նրան. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ եւ քո առաջ, այլեւս արժանի չեմ քո որդին կոչուելու»: Հայրը իր ծառաներին ասաց. «Անմիջապէս հանեցէ՛ք նրա նախկին պատմուճանը եւ հագցրէ՛ք նրան, մատանին նրա մատը դրէ՛ք եւ նրա ոտքերին՝ կօշիկներ. բերէ՛ք պարարտ եզը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախ լինենք, որովհետեւ իմ այս որդին մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց»: Եւ սկսեցին ուրախանալ: Իսկ նրա աւագ որդին ագարակում էր. եւ մինչ

գայր եւ մերձ եղեւ ի տունն, լուաւ զձայն երգոց եւ զպարուց: Եւ կոչեցեալ առ ինքն զմի ի ծառայիցն հարցանէր, թէ՝ Զի՞նչ լցէ այն: Եւ նա ասէ ցնա՝ Զի եղբայր քո եկալ է, եւ եզեն հայր քո զեզն պարարակ, զի ողջամբ ընկալաւ զնա: Բարկացաւ, եւ ո՛չ կամէր մտանել. եւ հայրն ելեալ արտաքս՝ աղաչէր զնա: Պատասխանի ետ եւ ասէ ցհայրն՝ Այս քանի՛ ամք են, զի ծառայեմ քեզ, եւ երբէք զպատուիրանաւ քով ո՛չ անցի. ուլ մի երբէք ո՛չ ետուր ինձ՝ զի ուրախ եղէց ընդ բարեկամս իմ. եւ յորժամ եկն որդիդ քո այդ՝ որ եկեր զկեանս քո ընդ պոռնիկս, զեներ դմա զեզն պարարակ: Եւ ասէ ցնա՝ Որդեա՛կ, դու հանապազ ընդ իս ես. եւ ամենայն որ ինչ իմ է՝ քո է. այլ ուրախ լինել եւ խնդալ պարտ էր, զի եղբայր քո այս մեռեալ էր եւ եկեաց, կորուսեալ՝ եւ գտաւ:

ՔԱՐՈԶ

Եկեալքս ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով զյոյս Միածնի Որդւոյն Աստուծոյ դիցուք ի սիրտս մեր՝ խնդրելով ի Նմանէ զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց:

գալիս էր եւ տանը մօտեցաւ, լսեց երգերի եւ պարերի ձայնը: Եւ իր մօտ կանչելով ծառաներից մէկին հարցրեց, թէ՝ Այդ ի՞նչ է: Եւ սա նրան ասաց. «Քո եղբայրը եկել է, եւ քո հայրը մորթեց պարարտ եզը, որովհետեւ ողջ առողջ ընդունեց նրան»: Նա բարկացաւ, եւ չէր ուզում ներս մտնել. իսկ հայրը դուրս ելնելով՝ աղաչում էր նրան: Որդին պատասխանեց եւ ասաց հօրը. «Այս քանի՛ տարի է, որ ծառայում եմ քեզ եւ երբէք քո հրամանները զանց չեմ արել. ինձ երբէք մի ուլ չտուիր, որ բարեկամներիս հետ ուրախութիւն անէի. երբ եկաւ քո այդ որդին, որը քո ունեցուածքը կերաւ պոռնիկների հետ, պարարտ եզը նրա համար մորթեցիր»: Հայրը նրան ասաց. «Որդեա՛կ, դու միշտ ինձ հետ ես. եւ ամէն ինչ որ իմն է՝ քոնն է. բայց պէտք էր ուրախ լինել եւ ցնծալ, որովհետեւ քո այս եղբայրը մեռած էր եւ կենդանացաւ, կորած էր եւ գտնուեց»:

ՔԱՐՈԶ

Հաւատով ապաշխարութեան խոստովանութեան եկածներս, Աստծոյ Միածին Որդու յոյսը մեր սրտերում, Նրանից խնդրենք մեր հանցանքներին քաւութիւն եւ թողութիւն:

Վասն զի Նա Ինքն է նախախնամողն Աստուած յաւիտենական, որ եկն կամաւ Հօր ի փրկել զարարածս եւ ասաց՝ զԻնքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց. շնորհելով զհանգիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալքս եւ զտաժանեալքս մեղօք յապաշխարութիւն քաւութեան:

Արդ, եկա՛յք ամենեքեան՝ խոնարհեալ անձամբք, բեկեալ սրտիւք, անկցուք եւ լացցուք առաջի Տեառն Արարչին մերոյ, զի անցուսցէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն Իւրով:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

Եւ քահանայն ասէ Լ

Տէր, ողորմեա՛,

եւ յորդորակածեւ

ԱՂՕԹՔ

Լուարո՛ւք արք եւ կանայք՝ որք սերմանեցիք յանդաստանս սրտից ձերոց զսերմն

Քանի որ Նա Ինքն է յաւիտենական նախախնամող Աստուած, որ Հօր կամքով եկաւ արարածներիս փրկելու եւ ասաց, որ՝ Ինքն է մեղաւորների քաւիչը, ապաշխարողների յոյսը. տառապածներին հանգիստ շնորհելով՝ ընդունում է մեղքերով ծանրաբեռնուածներիս, տանջուածներիս ապաշխարութիւնը՝ որպէս քաւութիւն:

Արդ, եկէք բոլորս՝ խոնարհուած հոգով, փշրուած սրտով, մեր Արարիչ Տիրոջ առջեւ խոնարհուենք եւ լաց լինենք, որ Իր բարերարութեամբ մեզնից հեռացնի մեր յանցանքների ահարկու սպառնալիքները:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

Ապա քահանան ասում է երեսուն անգամ

Տէր, ողորմեա՛,

եւ յորդորականման

ԱՂՕԹՔ

Լսեցէ՛ք, այրեր եւ կանայք՝ դո՛ւք, որ ձեր սրտի անդաստաններում սերմանեցիք հոգեւոր

հոգեւորապէս. որ եբեր ձեզ պտուղս անճաշակս՝ վայելչութեան երկնաւոր պսակացն: Վասն զի արտասուալից հառաչմամբ առիք զլուծ ապաշխարութեան յանձինս ձեր. ահա վարդապետականքն վերստին ծնան զձեզ այսօր՝ լուսեղէն աւազանաւն յապաշխարութիւն. յորում եւ սքանչելապէս պայծառանան լապտերք հոգւոց ձերոց եւ լուսագնացք շառաւիղք ապաշխարութեան ձերոյ, զոր պահօք եւ աղօթիւք եւ ճգնութեամբ մաքրեցիք զձեզ ի մեղաց եւ ի պատրանաց բանսարկուին:

Արդ, Քրիստոս Որդին Աստուծոյ գթասցի ի վերայ ճգնութեան ձերոյ. թողցէ զբազմութիւն մեղաց ձերոց եւ ուրախ լիցի ի վերայ ձեր՝ որպէս ի վերայ մոլորելոյ եւ կորուսելոյ ոչխարին՝ զոր բարձեալ ի վերայ ուսոց իւրոց՝ յերկնայինն փարախ էած, քան ի վերայ իննսուն եւ ինունցն անմոլարից եւ յանապատին թողելոց:

Արդ՝ ըստ նմին օրինակի ածցէ եւ խառնեսցէ զձեզ ի թիւ Սրբոցն՝ ի լուսեղէն երամս արդարոցն, եւ ջահազգեստեալ զձեզ՝ նորափեսուր զարդարեսցէ. լուսափայլ աղաւնւոյ նմանեալ Հոգւոյն Սրբոյ բնակարան արարեալ,

սերմը, որը ձեզ համար բերեց երկնաւոր պսակ-
ների վայելչութեան չճաշակուած պտուղները:
Քանի որ արտասուալից հառաչմամբ ձեզ
վրայ առաք ապաշխարութեան լուծը. ահա
այսօր վարդապետական ուսմունքը ձեզ վերստին
ծնեց՝ ապաշխարութեան լուսեղէն աւազանով.
որում եւ սքանչելապէս պայծառացան ձեր հոգու
լապտերները եւ ապաշխարութեան լուսագնաց
ճանապարհները, որ պահքով, աղօթքներով եւ
ճգնութեամբ ձեզ մաքրեցիք մեղքերից եւ
բանսարկուի պատրանքներից:

Արդ, Քրիստոս՝ Աստուծոյ Որդին, թող գթայ
ձեզ ձեր ճգնութեան համար. թող ների ձեր
բազմաթիւ մեղքերը եւ թող ուրախանայ
ձեզանով՝ ինչպէս մոլորուած ու կորսուած այն
մէկ ոչխարով, որին Իր ուսերի վրա վերցնելով՝
բերեց երկնային փարախ, քան թէ անապատում
թողած իննսունիններով, որոնք չէին մոլորուած:

Արդ ըստ այս օրինակի թող ձեզ բերի եւ
խառնի Սրբերի դասին՝ արդարների լուսեղէն
երամներին, եւ ջահապայծառ զգեստաւորելով՝
նորափետուր զարդարի. լուսափայլ աղաւնու
նման Սուրբ Հոգու բնակարան դարձնելով՝ ձեզ

ժառանգել տացէ ձեզ զանապական պսակն փառաց յԵրկնիցն Արքայութեան՝ պայծառ ծագմամբ եւ հոգեւոր երանութեամբն պայծառացուցեալ եւ թռուցեալ ի թեւս Հոգւոյն Սրբոյ լուսեղէն ամպօք՝ առ ի տեսանել զլոյսն փառաց յաւուր հրախաղաց ահաւոր գալստեան Իւրոյ: Եւ ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան իւրոյ լսել արժանացուսցէ զքաղցրալուր բարբառն զայն, թէ՝ Եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ զԱրքայութիւն ի սկզբանէ աշխարհի: Եւ ընդ նոսին գոհանալով փառաւորել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն, Աստուծո՛յ երկրպագեսցուք.

Տէ՛ր Աստուած փրկիչ մեր՝ որ ի ձեռն մարգարէին Նաթանայ յապաշխարումն Դաւթի հայեցեալ՝ իւրաքանչիւր մեղաց նորա թողութիւն շնորհեցեր. եւ զՄանասէի զապաշխարութիւն եւ զաղօթսն ընկալար. եւ անառակ որդւոյն ձայնի լուար. եւ յարտասուսն Պետրոսի գթացար. եւ զմաքսաւորին յանցանսն անտես արարեր. եւ զպոռնիկին

ժառանգութիւն տայ Երկնքի Արքայութեան փառքի անապական պսակը՝ պայծառացնելով ճաճանչափայլ ծագմամբ եւ հոգեւոր երանութեամբ, Սուրբ Հոգու թեւերով թռցնի լուսեղէն ամպերով՝ տեսնելու Իր ահաւոր գալստեան օրուայ հրախաղաց փառքերի լոյսը: Եւ սրբերի ու Իր անունը սիրողների հետ թող արժանացնի լսելու քաղցրաձայն այն խօսքը, թէ. «Եկէ՛ք, Իմ Հօ՛ր օրհնեալներ, ժառանգեցէ՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած Արքայութիւնը»: Եւ նրանց հետ գոհանալով փառաւորելու Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ամենքին խաղաղութիւն, Աստծո՛ւն երկրպագենք.

Տէ՛ր Աստուած փրկիչ մեր, որ Նաթան մարգարէի միջոցով՝ Դաւթի ապաշխարութեանը նայելով՝ թողութիւն շնորհեցիր նրա բոլոր մեղքերին. ընդունեցիր Մանասէի ապաշխարութիւնն ու աղօթքները. որ անառակ որդու ձայնը լսեցիր. գթացիր արտասուող Պետրոսին. անտեսեցիր մաքսաւորի յանցանքները, սրբեցիր պոռնիկի

զմեղսն սրբեցեր. եւ աւազակին՝ զդուռն դրախտին, վասն ճշմարիտ խոստովանութեան՝ բացեր. որ եւ զհետ մոլորեալ ոչխարին՝ յուզախնդիր շրջեցար եւ գտեալ զնա՝ բարձեր ի վերայ կենսաբեր ուսոյդ եւ բերեալ խառնեցեր ի հօտ Քո անմոլար:

Ապա՝ աղաչեմք զՔեզ, Տէ՛ր, եւ զծառայիցս Քոց ապաշխարողաց՝ ընկա՛լ զապաշխարութիւնսն, եւ մարդասիրութեամբդ անտես արարեալ թո՛ղ զյանցանս սոցա զկամայն եւ զակամայն, որ զեօթանասնեկին եօթն զմեղսն թողուլ հրամայեցեր մարդկան, զի ըստ բազում մեծութեանդ եւ ողորմութեան Քո ո՛չ գոյ չափ. որ ես բարերար եւ մարդասէր Աստուած. եւ Քեզ վայել է փա՛ռք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա դարձուցեալ յարեւմուտս հարցանէ քահանայն.

Հրաժարի՞ք ի սատանայէ եւ յամենայն խաբէութենէ նորա, եւ ի պաշտամանց նորա, եւ ի գնացից նորա եւ ի հրեշտակաց նորա:

մեղքերը, աւազակի առջեւ բացեցիր դրախտի դուռը՝ նրա ճշմարիտ խոստովանութեան համար, ելար փնտրելու մոլորեալ ոչխարին եւ գտնելով նրան՝ Քո կենսաբեր ուսի վրա վերցրեցիր ու բերելով՝ խառնեցիր Քո չմոլորուած հօտին:

Ահա, աղաչում ենք Քեզ, Տէ՛ր, Քո այս ապաշխարող ծառաներից՝ ընդունի՛ր իրենց ապաշխարութիւնը, եւ Քո մարդասիրութեամբ անտեսելով սրանց կամայ եւ ակամայ յանցանքները՝ թողութի՛ւն տուր, Դու որ հրամայեցիր ներե՛լ մարդկանց եօթանասուն անգամ եօթը մեղքերը, որովհետեւ, ինչպէս Քո մեծութիւնը, նոյնպէս եւ ողորմածութիւնը՝ չափ չունի, քանի որ, բարերար եւ մարդասէր Աստուած ես, եւ Քեզ վայել է փա՛ռք, իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ապա քահանան նրանց դարձնելով դէպի արեւմուտք՝ հարցնում է.

Հրաժարւո՞ւմ էք սատանայից եւ նրա բոլոր խաբէութիւններից, նրա սպասաւորներից, նրա ընթացքից եւ նրա հրեշտակներից:

Եւ ապաշխարողքն ասեն երիցս՝

Հրաժարիմք ի սատանայէ, ի սնոտիապատիր աշխարհէս եւ ի զբօսանաց սորա:

Եւ դարձուցեալ յարեւելս՝ դարձեալ հարցանէ քահանայն.

Հաւատա՞յք յԱմենասուրբ Երրորդութիւն՝ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին Սուրբ, ի Կաթողիկէ Եկեղեցի՝ ի մկրտութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Եւ նոքա ասեն երիցս՝

Հաւատա՛մք. հաւատա՛մք. հաւատա՛մք.

Ապա ասեն՝

Հանգանակ հաւատոյ

Հաւատամք ի մի Աստուած՝ ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի եւ երկրի, երեւելեաց եւ աներեւութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս՝ յՈրդին Աստուծոյ՝ ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միածին, այսինքն՝ յէութենէ Հօր: Աստուած՝ յԱստուծոյ, լոյս՝ ի լուսոյ, Աստուած ճշմարիտ՝ յԱստուծոյ ճշմարտէ, ծնունդ եւ ոչ արարած: Նոյն Ինքն ի բնութենէ Հօր, Որով ամենայն ինչ եղեւ յերկինս եւ ի վերայ երկրի՝

Եւ ապաշխարողները երեք անգամ ասում են.

Հրաժարւում ենք սատանայից, ունայնապատիր աշխարհից եւ նրա սին զուարճանքներից:

Եւ դարձնելով դէպի արեւելք՝ կրկին հարցնում է.

Հաւատո՞ւմ էք Ամենասուրբ Երրորդութեանը՝ Հօրը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, Ընդհանրական Եկեղեցուն, մկրտութեանը եւ մեղքերի թողութեանը:

Եւ նրանք երեք անգամ ասում են՝

Հաւատո՛ւմ ենք. հաւատո՛ւմ ենք. հաւատո՛ւմ ենք.

Ապա ասում են՝

Հաւատքի հանգանակը

Հաւատում ենք մէկ Աստծու՝ ամենակալ Հօրը, երկնքի եւ երկրի, տեսանելիների եւ անտեսանելիների Արարչին:

Եւ մէկ Տէր Յիսուս Քրիստոսին՝ Աստծու Որդուն՝ ծնուած Հայր Աստծուց՝ Միածին, այսինքն՝ Հօր էութիւնից:

Աստուած՝ Աստծուց, լոյս՝ լոյսից, ճշմարիտ Աստուած՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ եւ ո՛չ արարած: Նոյն Ինքը՝ Հօր բնութիւնից, Որով ամէն ինչ եղաւ երկնքում եւ երկրի վրայ՝

երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր՝ մարդկան, եւ վասն մերոյ փրկութեան, իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով:

Որով էառ զմարմին, զհոգի եւ զմիտ եւ զամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս եւ ոչ կարծեօք: Զարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց է նովին մարմնովն եւ փառօք Հօր՝ ի դատել զկենդանիս եւ զմեռեալս, Որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք եւ ի Սուրբ Հոգին՝ յանեղն եւ ի կատարեալն, որ խօսեցաւ յՕրէնս եւ ի Մարգարէս եւ յԱւետարանս. Որ էջն ի Յորդանան, քարոզեաց յԱռաքեալսն եւ բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք եւ ի Մի միայն, Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց. ի յարութիւնն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ մարմնոց, յարքայութիւնն երկնից եւ ի կենսան յաւիտենականս:

տեսանելիներ եւ անտեսանելիներ: Որ մեզ՝ մարդկանց, եւ մեր փրկութեան համար, երկնքից իջնելով՝ մարմնացաւ, մարդացաւ, Սուրբ Հոգով կատարելապէս ծնուեց սուրբ Կոյս Մարիամից:

Որով վերցրեց մարմինը, հոգին եւ միտքը եւ ամէն ինչ, որ ունի մարդը՝ ճշմարտապէս եւ ո՛չ երեւութապէս: Զարչարուեց, խաչուեց, թաղուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով ելաւ երկինք եւ նստեց Հօր աջ կողմում: Գալու է նոյն մարմնով եւ Հօր փառքով՝ դատելու ողջերին եւ մեռեալներին, Որի թագաւորութիւնը վախճան չունի:

Հաւատում ենք եւ Սուրբ Հոգուն՝ անեղին եւ կատարեալին, որ խօսեց Օրէնքում եւ Մարգարէներում եւ Աւետարաններում: Որ իջաւ Յորդանան, քարոզեց առաքեալների միջոցով եւ բնակուեց սուրբերի մէջ:

Հաւատում ենք նաեւ միայն Մէկ, Ընդհանրական եւ Առաքելական Սուրբ Եկեղեցու, մէկ մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերի քաւութեան եւ թողութեան. մեռելների յարութեանը, հոգիների եւ մարմինների յաւիտենական դատաստանին, երկնքի արքայութեանը եւ յաւիտենական կեանքին:

Եւ զկնի.

ՍԱՂՄՈՍ ՁԴ

Հաճեցար, Տէ՛ր, ընդ երկիր Քո եւ դարձուցեր զգերութիւնն Յակոբայ:

Թողեր զանիրաւութիւն ժողովրդեան Քո, ծածկեցեր զամենայն մեղս նոցա:

Լռեցուցեր զամենայն սրտմտութիւնս Քո, դարձար ի բարկութենէ սրտմտութեան Քո:

Դա՛րձ առ մեզ, Աստուա՛ծ փրկիչ մեր, եւ դարձո՛ զսրտմտութիւնս Քո ի մէնջ:

Մի՛ յաւիտեան բարկանար մեզ, Տէ՛ր, եւ մի՛ ձգեր զբարկութիւն Քո ազգէ մինչեւ յազգ:

Աստուա՛ծ, Դու դարձեալ կեցուսցես զմեզ, ժողովուրդ Քո ուրախ եղիցի ի Քեզ:

Ցոյց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս Քո, եւ զփրկութիւնս Քո տուր մեզ:

Լուաք զինչ խօսի Տէր Աստուած մեր. խօսեսցի զխաղաղութիւն ժողովրդեան Իւրոյ՝ առ սուրբս Իւր եւ առ այնոսիկ որ դարձեալ են առ Նա սրտիւք:

Սակայն մերձ է առ երկիւղածս Իւր փրկութիւն Նորա, բնակիլ փառաց Նորա յերկրի մերում:

ՍԱՂՄՈՍ 84

Տէ՛ր, հաճեցիր Քո երկիրը ու ետ դարձրիր Յակոբին գերութիւնից:

Ներեցիր ժողովրդիդ անիրաւութիւնը, ջնջեցիր նրա բոլոր մեղքերը:

Զսպեցիր ողջ սրտմտութիւնդ, ետ դարձար Քո սաստիկ բարկութիւնից:

Դէպի մե՛զ դարձիր, Աստուա՛ծ փրկիչ մեր, ու ե՛տ պահիր սրտմտութիւնդ մեզնից:

Մեզ վրայ յաւիտեան մի՛ բարկացիր, Տէ՛ր, եւ բարկութիւնդ սերնդից սերունդ թող չձգուի:

Աստուա՛ծ, Դու դարձեալ մեզ պիտի փրկես, եւ ժողովուրդդ պիտի ուրախանայ Քեզնով:

Յո՛յց տուր մեզ Քո ողորմութիւնը, Տէ՛ր, եւ Քո փրկութիւնը շնորհի՛ր մեզ:

Լսեցինք, թէ ինչ է խօսում Տէր Աստուածը մեր, խաղաղութեան մասին պիտի խօսի Իր ժողովրդի, Իր սրբերի եւ սրտով դէպի Իրեն դարձողների հետ:

Արդարեւ, մօտ է Նրա փրկութիւնն Իր երկիւղն ունեցողների համար, որպէսզի մեր երկրում Նրա փառքը հաստատուի:

Ողորմութիւն եւ ճշմարտութիւն պատահեսցին, արդարութիւն եւ խաղաղութիւն համբուրեսցին:

Ճշմարտութիւն յերկրէ բուսաւ, արդարութիւն յերկնից երեւեցաւ:

Տէր տացէ զքաղցրութիւն եւ երկիր մեր տացէ զպտուղ Իւր:

Արդարութիւն առաջի Նորա գնասցէ, դիցէ ի ճանապարհի զգնացս Իւր:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ՁԵ

Խոնարհեցո՛, Տէ՛ր, զունկն Քո եւ լո՛ւր ինձ, զի աղքատ եւ տնանկ եմ ես:

Պահեա՛ զանձն իմ սուրբ, Տէ՛ր. փրկեա՛ զծառայս Քո, Աստուա՛ծ իմ, որ ի Քեզ յուսացայ:

Ողորմեա՛ ինձ, Տէ՛ր, զի առ Քեզ աղաղակեցի զօրհանապազ:

Ուրա՛խ արա զանձն ծառայի Քո, զի առ Քեզ, Տէ՛ր, համբարձի զանձն իմ.

Զի Դու, Տէ՛ր, քաղցր եւ ուղիղ ես, բազում-ողորմ առ ամենեսեան որ կարդան առ Քեզ:

Ողորմութիւնն ու ճշմարտութիւնը պիտի հանդիպեն, արդարութիւնն ու խաղաղութիւնը պիտի համբուրուեն:

Ճշմարտութիւնը երկրից բուսաւ, արդարութիւնը երկնքից երեւաց:

Տէրը բարութիւն պիտի գործի, իսկ մեր երկիրն իր պտուղը պիտի տայ:

Արդարութիւնը նրա առջեւից պիտի գնայ՝ ճանապարհ տալով նրա ընթացքին:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ 85

Մօտեցրո՛ւ, Տէ՛ր, ականջը Քո եւ լսի՛ր ինձ, քանզի աղքատ եւ տնանկ եմ ես:

Անձն իմ սո՛ւրբ պահիր, Տէ՛ր, փրկի՛ր, Աստուա՛ծ իմ, Քո ծառային, որ յոյսը դրել է Քեզ վրայ:

Ողորմի՛ր ինձ, Տէ՛ր, քանզի գիշեր-ցերեկ Քե՛զ կանչեցի:

Ուրախացրո՛ւ ծառայիդ անձն, Տէ՛ր, քանզի անձն իմ դէպի Քեզ բարձրացրի.

Որովհետեւ Դու, Տէ՛ր, քաղցր եւ ուղիղ ես, բազում-ողորմ՝ նրանց հանդէպ, ովքեր կանչում են Քեզ:

Ունկն դիր, Տէ՛ր, աղօթից իմոց եւ նայեա՛ ի ձայն խնդրուածաց իմոց:

Յաւուր նեղութեան իմոյ կարդացի առ Քեզ, եւ լուար ինձ:

Ո՛չ ոք է նման Քեզ յաստուածս, Տէ՛ր, եւ ո՛չ ոք որպէս զգործս Քո:

Զամենայն ազգս զոր արարեր՝ եկեսցեն եւ երկիր պագցեն առաջի Քո, փառաւոր արասցեն զանուն Քո յաւիտեան:

Մեծ ես Դու, Տէ՛ր, եւ առնես սքանչելիս, եւ Դո՛ւ միայն ես Աստուած:

Առաջնորդեա՛ ինձ ի ճանապարհի Քում, եւ գնացից ի ճշմարտութեան Քում, եւ ուրախ եղիցի սիրտ իմ՝ երկնչել յանուանէ Քումմէ:

Խոստովան եղեց առ Քեզ, Տէ՛ր Աստուած իմ, բոլորով սրտիւ իմով, փառաւոր արարից զանուն Քո յաւիտեան:

Մեծ եղեւ ի վերայ իմ ողորմութիւն Քո, Տէ՛ր, փրկեցեր զաձն իմ ի դժոխոց ներքնոց:

Աստուա՛ծ, անօրէնք յարեան ի վերայ իմ, եւ ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ, եւ ոչ համարեցան զՔեզ Աստուած առաջի իւրեանց:

Այլ Դու, Տէ՛ր Աստուած իմ, գթած ես եւ

Ականջ դիր, Տէ՛ր, իմ աղօթքներին եւ ո՛ւշ դարձրու խնդրանքիս ձայնին:

Իմ նեղութեան օրը ես կանչեցի Քեզ, եւ Դու լսեցիր ինձ:

Աստուածների մէջ Քեզ նմանը չկա՛յ, Տէ՛ր, եւ ոչի՛նչ չկայ, որ նմանուի Քո գործերին:

Բոլոր ազգերը, որոնց ստեղծեցիր, պիտի գան երկրպագեն Քո առջեւ, յաւիտեան փառք պիտի տան Քո անունը:

Մեծ ես Դու, Տէ՛ր, եւ հրաշագործութիւններ ես անում, եւ Դո՛ւ ես միայն Աստուած:

Առաջնորդի՛ր ինձ Քո ճանապարհով, որ ընթանամ Քո ճշմարտութեամբը, եւ սիրտս ուրախանայ՝ երկնչելով Քո անունից:

Ամբողջ սրտովս գոհութիւն պիտի մատուցեմ Քեզ, Տէ՛ր Աստուած իմ, յաւիտեան փառք պիտի տամ Քո անունը:

Մեծ եղաւ Քո ողորմութիւնն իմ հանդէպ, հոգիս փրկեցիր խոր դժոխքից:

Աստուա՛ծ, անօրէններն յարձակուեցին ինձ վրայ, հզօրների ամբոխներն հետապնդեցին ինձ, եւ Քեզ իրենց առջեւ Աստուած չհամարեցին:

Բայց Դու, Տէ՛ր Աստուած իմ, գթասիրտ ու

ողորմած, երկայնամիտ, բազումողորմ եւ ճշմարիտ. նայեա՛ առ իս եւ ողորմեա ինձ:

Տո՛ւր զօրութիւն ծառայի Քո, կեցո՛ զորդի աղախնոյ Քո եւ արա առ իս նշան բարութեան.

Տեսցեն ատելիք իմ եւ ամաչեսցեն, զի Դու, Տէ՛ր, օգնեցեր ինձ եւ մխիթարեցեր զիս:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ``

ՍԱՂՄՈՍ ՃԺԴ

Սիրեցի, զի լուիցէ Տէր զձայն աղօթից իմոց. զի խոնարհեցոյց զունկն Իւր առ իս, եւ ես յաւուրս իմ կարդացի առ Նա:

Շրջեցան զինեւ երկունք մահու, եւ վիշտք դժոխոց գտին զիս.

Զնեղութիւն եւ զանձկութիւն գտի, եւ զանուն Տեառն կարդացի.

Ո՛ Տէր, փրկեա՛ զանձն իմ. ողորմած եւ արդար է Տէր Աստուած մեր. ողորմի եւ պահէ զտղայս Տէր:

Ես խոնարհ եղէ եւ Տէր կեցոյց զիս. դա՛րձ, անձն իմ, ի հանգիստ քո, զի Տէր օգնեաց քեզ:

Փրկեաց զանձն իմ ի մահուանէ, զաչս իմ

ողորմած ես, համբերատար, բազումողորմ եւ ճշմարիտ. նայի՛ր ու ողորմիր ինձ:

Զօրութի՛ւն տուր Քո ծառային, պահպանի՛ր ա-ղախնիդ որդուն, եւ ինձ բարութեան նշան ցոյց տուր.

Թող ատելիներն իմ տեսնեն ու ամօթահար լինեն, որ Դու, Տէ՛ր, օգնեցիր ու մխիթարեցիր ինձ:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ``

ՍԱՂՄՈՍ 114

Հաճելի է ինձ, որ Տէրը լսեց ձայնն իմ աղօթքի. ականջն Իր մօտեցրեց ինձ, եւ ես իմ օրերում Նրան դիմեցի:

Ինձ պատեց երկունքը մահուան, եւ դժոխքի վշտերն ինձ բռնեցին:

Նեղութիւն եւ անձկութիւն գտայ եւ Տիրոջ անունը կանչեցի.

«Ո՛վ Տէր, փրկի՛ր ինձ». գթառատ եւ արդար է մեր Տէր Աստուածը. Տէրը ողորմում եւ պահպանում է մանուկներին:

Ես խոնարհ եղայ, եւ Տէրն ինձ փրկեց. դարձի՛ր, անձն իմ, դէպի հանգիստը քո, քանզի Տէրն օգնեց քեզ:

Նա ինձ փրկեց մահուանից, աչքերս՝

յարտասուաց եւ զոտս իմ ի գայթակղութենէ:

Հաճոյ եղէց առաջի Տեառն յերկրին կենդանեաց:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ՝՝՝

ՍԱՂՄՈՍ ՃԺԷ

ԿՁ. Բացէք ինձ զդրունս արդարութեան՝ զի մտից ընդ այն, եւ խոստովան եղէց Տեառն:

ՓԽ. Խոստովան եղերուք Տեառն՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցէ տունն Իսրայելի՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցէ տունն Ահարոնի՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ասասցեն երկիւղածք Տեառն՝ զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա:

Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, եւ լուաւ ինձ յանդորր:

Տէ՛ր է իմ օգնական, եւ ես ոչ երկեայց, զի՞ արասցէ ինձ մարդ:

Տէ՛ր է իմ օգնական, եւ ես տեսից ի թշնամիս իմ:

Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ ի մարդիկ:

արտասուքից եւ ոտքերս՝ սայթաքումից:

Թող ողջերի երկրում հաճելի լինեմ Տիրոջ առջեւ:

Փա՜ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ``

ՍԱՂՄՈՍ 117

ԿՅ. Բացէ՛ք արդարութեան դռներն իմ առաջ, որ մտնեմ ներս ու Տիրոջը գոհութիւն մատուցեմ:

ՔԽ. Գոհութիւն մատուցեցէք Տիրոջը, քանզի բարի է Նա, քանզի յաւերժ է ողորմութիւնը Նրա:

Տունն Իսրայելի թող ասի, որ բարի է Նա, որ յաւերժ է ողորմութիւնը Նրա:

Տունն Ահարոնի թող ասի, որ բարի է Նա, որ յաւերժ է ողորմութիւնը Նրա:

Տիրոջից երկիւղ կրողները թող ասեն, որ բարի է Նա, որ յաւերժ է ողորմութիւնը Նրա:

Նեղութեան մէջ ես Տիրոջը կանչեցի, Նա լսեց եւ տուեց ինձ անդորրութիւն:

Տէրն օգնականն է իմ, եւ ես չեմ երկնչի. մարդն ինձ ի՞նչ կարող է անել:

Տէրն օգնականն է իմ, եւ ես կը տեսնեմ վախճանն իմ թշնամիների:

Լաւ է յոյսը դնել Տիրոջ վրայ, քան յոյսը դնել մարդկանց վրայ:

Բարի է յուսալ ի Տէր քան յուսալ յիշխանս:

Ամենայն ազինք շրջեցան զինեւ, եւ անուամբ Տեառն յաղթեցի նոցա:

Շրջելով շրջեցան զինեւ եւ պաշարեցին զիս ի միասին, եւ անուամբ Տեառն վանեցի զնոսա:

Շուրջ եղեն զինեւ որպէս մեղուք, վառեցան, բորբոքեցան որպէս փուշք ի հուր, եւ անուամբ Տեառն մերժեցի զնոսա:

Ի մերժելն դրդուեացայ եւ եղէ մերձ ի գլորել, եւ Տէր ընկալաւ զիս:

Զօրութիւն իմ եւ օգնութիւն իմ Տէր, եւ եղեւ ինձ ի փրկութիւն:

Ձայն ցնծութեան եւ փրկութեան ի յարկս արդարոց:

Աջ Տեառն արար զօրութիւն, աջ Տեառն բարձր արար զիս, եւ աջ Տեառն արար զօրութիւն:

Ոչ մեռայց, այլ կեցից եւ պատմեցից զգործս Տեառն:

Խրատելով խրատեաց զիս Տէր, եւ ի մահ ոչ մատնեաց:

Բացէք ինձ զդրունս արդարութեան՝ զի մտից ընդ այն, եւ խոստովան եղէց Տեառն:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Լաւ է յոյսը դնել Տիրոջ վրայ, քան յոյսը դնել իշխանների վրայ:

Բոլոր ազգերը շրջապատեցին ինձ, բայց Տիրոջ անուամբ յաղթեցի նրանց:

Շուրջբոլորս բռնեցին, միահամուռ պաշարեցին ինձ, բայց Տիրոջ անուամբ վանեցի նրանց:

Մեղուների պէս շուրջս լցուեցին, վառուեցին բորբոքուեցին ինչպէս հրաճարակ փուշ, բայց Տիրոջ անուամբ վանեցի նրանց;

Երբ ինձ հրեցին, ես սասանուեցի եւ մօտ էի գլորուելու, բայց Տէրը բռնեց ինձ:

Իմ զօրութիւնն ու օգնութիւնն է Տէրը, Նա իմ փրկութիւնը եղաւ:

Ցնծութեան եւ փրկութեան ձայն կայ արդարների սրահներում:

Տիրոջ աջը զօրութիւն գործեց, Տիրոջ աջը բարձրացրեց ինձ, եւ Տիրոջ աջը զօրութիւն գործեց:

Չպիտի մեռնեմ, այլ պիտի ապրեմ եւ Տիրոջ գործերը պիտի պատմեմ:

Տէրն ինձ խրատելով պատժեց, բայց չմատնեց մահուան:

Բացէ՛ք արդարութեան դռներն իմ առաջ, որ մտնեմ ներս ու Տիրոջը գոհութիւն մատուցեմ:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ ԻԲ

Տէր հովուեսցէ զիս, եւ ինձ ինչ ոչ պակասեսցէ:

Ի վայրի դալարւոջ, անդ բնակեցոյց զիս, եւ առ ջուրս հանգստեան սնոյց զիս:

Դարձոյց զանձն իմ առ իս, եւ առաջնորդեաց ինձ ի ճանապարհս արդարութեան վասն անուան Իւրոյ:

Թէպէտ եւ գնացիցս ես ի մէջ ստուերաց մահու, ոչ երկեայց ի չարէ՝ զի Դու, Տէ՛ր, ընդ իս ես.

Յուպ Քո եւ գաւազան՝ նոքա մխիթարեսցեն զիս:

Պատրաստ արարեր առաջի իմ զսեղան, ակն յանդիման նեղչաց իմոց.

Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ Քո որպէս անապակ արբեցոյց զիս:

Ողորմութիւն Քո, Տէ՛ր, զհետ իմ եկեսցէ զամենայն աւուրս կենաց իմոց, բնակել ինձ ի տան Տեառն ընդ երկայն աւուրս:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՍԱՂՄՈՍ 22

Տէրն իմ հովիւն է, եւ ինձ ոչինչ չի պակասի:

Այնտեղ, դալար վայրերում Նա ինձ բնակեցրեց եւ հանդարտ ջրերի մօտ ինձ սնուցեց:

Նա կենդանացրեց ինձ եւ յանուն Իր անուան առաջնորդեց ինձ արդարութեան ճանապարհներով:

Եթէ նոյնիսկ անցնեմ մահուան ստուերների միջով, չեմ վախենայ չարից, քանզի Դու, Տէ՛ր, ինձ հետ ես:

Քո ցուպն ու գաւազանն ինձ կը մխիթարեն:

Իմ առջեւ սեղան պատրաստեցիր՝ հալածիչներիս աչքերի դիմաց:

Գլուխս իւղով օծեցիր. Քո բաժակն ինձ արբեցրեց անապակ գինու պէս:

Ողորմութիւնը Քո, Տէ՛ր, ինձ հետ թող լինի կեանքիս բոլոր օրերին՝ երկար օրեր բնակուելու Տիրոջ տանը:

Փա՜ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ընթերցուածս ի Յովելայ մարգարէէ.
(գլ. 2:12 - 16).

Եւ արդ ասէ Տէր Աստուած ձեր՝ Դարձարու՛ք առ իս յամենայն սրտէ ձերմէ, պահօք եւ լալով եւ կոծելով: Պատառեցէ՛ք զսիրտս ձեր եւ մի՛ զհանդերձս:

Եւ դարձարուք առ Տէր Աստուած ձեր՝ զի ողորմած եւ գթած է, երկայնամիտ եւ բազումողորմ, եւ զղջանայ ի վերայ չարեաց:

Ո՞ զիտէ, եթէ դարձցի եւ ապաշաւեսցէ, եւ թողցէ զկնի իւր օրհնութիւն, եւ զոհս եւ սպանդ Տեառն Աստուծոյ մերում:

Փո՛ղ հարէք ի Սիոն, սրբեցէք պահս, քարոզ կարդացէք պաղատանս: Ժողովեցէ՛ք զժողովուրդսդ, սրբեցէ՛ք զեկեղեցի:

Ընթերցուածս յԵրեմիայ մարգարէէ.
(գլ. 3:14 - 15)

Այսպէս ասէ Տէր՝ Դարձարու՛ք առ իս, որդի՛ք հեռացեալք, զի ես տիրեցիս ձեզ. եւ առիցս զձեզ մի՝ ի քաղաքէ եւ երկուս՝ յազգէ, եւ տարայց զձեզ ի Սիոն. եւ տացս ձեզ հովիւս ըստ սրտի իմում, եւ հովուելով հովուեսցեն զձեզ իմաստութեամբ:

Ընթերցուածքը Յովէլի մարգարէութիւնից է.
(գլ. 2:12-16)

Եւ արդ, ձեր Տէր Աստուածն ասում է. «Դարձէ՛ք ինձ ձեր ամբողջ սրտով, ծոմապահութեամբ, լալով ու կոծելով: Ձեր սրտե՛րը պատռեցէք եւ ո՛չ թէ ձեր հագուստները»:

Այո՛, դարձէ՛ք ձեր Տէր Աստծուն, որովհետեւ Նա ողորմած է եւ գթասիրտ, համբերատար եւ բազումողորմ, եւ ափսոսում է մարդկանց չարիքների համար:

Ո՞վ գիտի, թերեւս դառնայ ու խղճայ, եւ իրենից յետոյ լինի օրհնութիւն, զոհ եւ զենում մեր Տէր Աստծուն:

Փո՛ղ զարկէք Սիոնի մէջ, ծոմի օր նշանակեցէք, պաղատանք քարոզեցէք, հաւաքեցէ՛ք ժողովրդին, սո՛ւրբ ժողով գումարեցէք:

Ընթերցուածքը Երեմիայի մարգարէութիւնից է.
(գլ. 3:14 - 15)

Այսպէս է ասում Տէրը. «Ինձնից հեռացա՛ծ որդիներ, դարձէ՛ք ինձ մօտ, որպէսզի ես ձեզ տիրեմ: Կառնեմ ձեզ, ամէն քաղաքից՝ մէկին, եւ ամէն ցեղից՝ երկուսին, ու կը տանեմ ձեզ Սիոն: Իմ սրտին հաճելի առաջնորդներ կը տամ ձեզ, թող նրանք իմաստութեամբ հովուութիւն անեն ձեզ»:

Խնդրեցէ՛ք զՏէր, եւ յորժամ գտանիցէք զՆա՝ կարդացէ՛ք առ Նա. եւ իբրեւ մերձեսցի առ ձեզ, թողցէ ամբարիշտն զճանապարհս իւր, եւ այր անօրէն՝ զխորհուրդս իւր. եւ դարձցի առ Տէր եւ գտցէ զողորմութիւն. եւ առ Աստուած մեր, զի բազմապատիկ թողցէ զանօրէնութիւնս ձեր: Զի ոչ են խորհուրդք իմ իբրեւ զխորհուրդս ձեր, եւ ոչ ճանապարհք իմ իբրեւ զճանապարհս ձեր՝ ասէ Տէր: Այլ որպէս հեռի են երկինք յերկրէ, այնպէս հեռի են ճանապարհք իմ ի ճանապարհաց ձերոց, եւ խորհուրդք իմ՝ ի խորհրդոց ձերոց:

Զօր օրինակ, եթէ իջանիցէ անձրեւ կամ ձիւն յերկնից եւ անդրէն ոչ դառնայ մինչեւ արբուսցէ զերկիր, ծնցի եւ բղխեսցէ, եւ տացէ զսերմն սերմանողի եւ զհաց ի կերակուր. այնպէս եղիցի բանն իմ, որ ելանէ ի բերանոյ իմմէ, մի՛ դարձցի դատարկ՝ մինչեւ կատարեսցէ զոր ինչ կամիցիմ, եւ դիւրեցիցէ զճանապարհս քո, եւ զճանապարհս իմ պահեսցես:

Զի ուրախութեամբ ելջիք, եւ ցնծութեամբ ուսանիջիք. զի լերինք եւ բլուրք կայտառեսցեն

Ընթերցուածքը Եսայու մարգարէութիւնից է.
(գլ. 55:6 - 13)

Փնտրեցէ՛ք Տիրոջը, եւ երբ գտնէք՝ կանչեցէ՛ք Նրան. երբ Նա ձեզ մօտենայ, ամբարիշտը թող հրաժարուի իր ընթացքից, անօրէն մարդը՝ իր խորհուրդներից. թող նա վերադառնայ Տիրոջ մօտ՝ եւ ողորմութիւն կը գտնի մեր Աստծու մօտ, Ով բազմապատիկ թողութիւն պիտի շնորհի ձեր անօրէնութիւններին: «Իմ խորհուրդները նման չեն ձեր խորհուրդներին, եւ ոչ էլ Իմ ճանապարհները՝ ձեր ճանապարհներին, - ասում է Տէրը, - այլ, ինչպէս երկինքն է հեռու երկրից, այնպէս էլ Իմ ճանապարհներն են հեռու ձեր ճանապարհներից, եւ Իմ խորհուրդները՝ ձեր խորհուրդներից:

Ինչպէս որ, ասենք, երբ անձրեւ կամ ձիւն է իջնում երկնքից եւ կրկին այնտեղ չի վերադառնում, քանի դեռ չի ոռոգել երկիրը, չի ծլեցրել ու պտղաբերել այն, սերմանողին սերմ եւ ուտելու հաց չի տուել. այդպէս էլ պիտի լինի Իմ խօսքը, որ ելնում է Իմ բերանից. նա դատարկ չի վերադառնալու, մինչեւ որ չկատարի այն՝ ինչ կամենում եմ Ես. պիտի հեշտացնեմ քո ճանապարհները, որպէսզի Իմ ճանապարհներն էլ դու պահպանես:

Ուրախութեամբ պիտի ելնէք եւ ցնծութեամբ պիտի սովորէք. լեռներն ու բլուրները պիտի խայտան,

ընդունել զձեզ ուրախութեամբ, եւ ամենայն ծառք անտառի ծափս հարցեն ոստովք իւրեանց: Եւ փոխանակ ցրդւոյն նոճ բուսցի, եւ փոխանակ դժնիկին մուրտ ելցէ. եւ եղիցի Տեառն յանուն եւ ի նշան յաւիտենից, եւ մի՛ պակասեսցէ:

Պետրոսի առաքելոյն ի Կաթողիկեայց առաջին թղթոյն է ընթերցուածս. (գլ. 2:1 - 10)

Ի բաց թօթափել այսուհետեւ զամենայն չարութիւն, եւ զամենայն նենգութիւն, եւ զկեղծաւորութիւնս, եւ զնախանձ եւ զամենայն չարախօսութիւն. իբրեւ զարդի ծնեալ մանկունս խօսունս եւ անխարդախ կաթին փափագիցէ՛ք, զի նովաւ աճիցէք ի փրկութիւն, եթէ ճաշակիցէք՝ զի քաղցր է Տէր:

Առ որ մատուցեալ, ի Վէմն կենդանի, որ թէպէտ ի մարդկանէ անարգեալ, այլ առ ի յԱստուծոյ ընտրեալ եւ պատուական է: Եւ դուք՝ իբրեւ զվէմս կենդանիս, շինիք տաճար հոգեւոր, յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւոր պատարագս՝ հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի:

խնդութեամբ ընդունեն ձեզ, եւ անտառի բոլոր ծառերը պիտի ծափահարեն ձեզ: Գիհու փոխարէն նոճի պիտի բուսնի, դժնիկի փոխարէն մրտենի պիտի աճի. եւ դա պիտի լինի յանուն Տիրոջ եւ ի նշան յաւիտենականութեան, ու չի՛ նուազելու»:

Ընթերցուածքը Պետրոս առաքեալի ընդհանրական առաջին թղթից է. (գլ. 2:1 - 10)

Ուրեմն, դէ՛ն գցելով ամէն չարութիւն, ամէն նենգութիւն, կեղծաւորութիւններ, նախանձ եւ ամէն չարախօսութիւն, որպէս նորածին երեխաներ, միշտ փափագո՛ղ եղէք բանական եւ անխարդախ կաթին, որպէսզի Նրա միջոցով աճէք փրկութեան համար, քանի որ արդէն ճաշակել էք, որ քաղցր է Տէրը:

Մօտեցէ՛ք Նրան՝ կենդանի Վէմին, որը, թէպէտ մարդկանցից անարգուած, բայց Աստծու առաջ ընտրեալ եւ թանկագին է: Եւ դուք, իբրեւ կենդանի վէմեր, կառուցւում էք որպէս հոգեւոր տաճար, որպէս անարատ քահանայութիւն, որպէսզի Յիսուս Քրիստոսի միջոցով մատուցէք հոգեւոր պատարագներ, որոնք հաճելի լինեն Աստծուն:

Քանզի կայ իսկ ի Գրի, թէ՝ Ահաւասիկ դնեմ ի Սիոն Վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական, եւ որ ի Նա հաւատասցէ՝ մի ամաչեսցէ:

Զեզ այսուհետեւ հաւատացելոցդ՝ Վէմ պատուական, իսկ անհաւատիցն՝ Վէմն, զոր անարգեցին շինողքն, նա եղեւ գլուխ անկեան:

Եւ՝ Վէմ գլորման եւ Վէմ գայթակղութեան. որ գայթակղին ապստամբեալք ի բանէն՝ յոր եւ եդան: Այլ դու՛ք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական, որպէսզի զձեր առաքինութիւնսն նուիրիցէք այնմ, որ զձեզ ի խաւարէն կոչեաց յիւր սքանչելի լոյսն: Որք երբեմն չժողովուրդ, բայց արդ ժողովուրդ Աստուծոյ. որք չողորմեալք, այժմ ողորմութիւն գտէք:

Ալէլուիա՛, ալէլուիա՛.

ՍԱՂՄՈՍ ԼԸ

Ասացի թէ՝ Պահեցից զճանապարհս իմ, զի մի՛ մեղայց լեզուաւ իմով:

Եդի պահապան բերանոյ իմոյ՝ ի հակառակել

Քանզի Գրքում էլ կայ, թէ՝ «Ահաւասիկ ընտիր Վէմ եմ դնում Սիոնի մէջ, թանկագին անկիւնաքար. եւ ով Նրան հաւատայ, ամօթով չպիտի մնայ»:

Ուրեմն, ձեզ՝ հաւատացեալներիդ համար՝ թանկագին վէմ, իսկ անհաւատներին՝ «Այն Վէմը, որն անարգեցին շինողներն, ա՛յն եղաւ անկիւնաքար»:

Ինչպէս նաեւ՝ «Վէմ գլորման եւ Վէմ գայթակղութեան», որով գայթակղւում են խօսքին անհնազանդ եղողները, եւ նրանք հենց այդ բանի համար էլ սահմանուած էին: Բայց դո՛ւք ընտիր ցեղ էք, թագաւորութիւն, քահանայութիւն, սուրբ ազգ, Աստծու սեփական ժողովուրդ, որպէսզի ձեր առաքինութիւնները նուիրէք Նրան՝ Ով խաւարից ձեզ կանչեց Իր սքանչելի լոյսին: Դուք, որ մի ժամանակ ժողովուրդ չէիք, բայց այժմ Աստծու ժողովուրդն էք. դուք, որ ողորմութիւն չէիք գտել, այժմ ողորմութիւն գտաք:

Ալէլուիա՛, ալէլուիա՛.

ՍԱՂՄՈՍ 38

Ասացի. «Զգուշանամ իմ ճանապարհին, որ լեզուովս չմեղանչեմ»:

Բերանիս պահպանակ դրի, երբ մեղաւորը

մեղաւորին առաջի իմ:

Խուլ եղէ եւ խոնարհեցայ, լռեցի ի բարութենէ եւ ցաւք իմ նորոգեցան յիս:

Ջեռաւ սիրտ իմ ի փորի իմում, եւ ի խորհուրդս իմ վառեցաւ հուր:

Խօսեցայ լեզուաւ իմով եւ ասացի՝ Ցո՛յց ինձ, Տէ՛ր, զկատարած իմ եւ զթիւ աւուրց իմոց քանիո՞ն է, զի գիտացից թէ ո՛րչափ ինչ պակասեալ է յինէն:

Ահա չափով եդիր զաւուրս իմ, եւ կար զօրութեան իմոյ որպէս ոչ ինչ է առաջի իմ. սակայն ամենեւին ընդունայն է ամենայն մարդ մսեղի:

Ապաքէն որպէս ի պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խռովի, գանձէ եւ ո՛չ գիտէ ում ժողովէ:

Իսկ արդ՝ ո՞վ է համբերութիւն իմ, թէ ո՛չ Դու, Տէ՛ր, կամ կար զօրութեան իմոյ, թէ ոչ ի Քէն:

Յամենայն անօրէնութենէ իմմէ փրկեցեր զիս եւ նախատինս անզգամաց արարեր զիս:

Լուռ եղէ եւ ոչ բացի զբերան իմ, զի Դու արարեր:

Ի բա՛ց արա յինէն զտանջանս իմ, զի ի զօրութենէ ձեռին Քո ես պակասեցայ:

հակառակուեց ինձ:

Խուլ եղայ եւ խոնարհ դարձայ, բարիքս լռութեան մատնեցի, եւ ցաւերս նորոգուեցին իմ մէջ:

Սիրտս կրակ կտրեց իմ ներսում, եւ մտքիս մէջ հուր բորբոքուեց:

Խօսեցի լեզուովս եւ ասացի. «Տէ՛ր, ցո՛յց տուր ինձ, թէ ե՞րբ է իմ վախճանը, եւ որքան է կեանքիս օրերի թիւը, որպէսզի իմանամ, թէ ինչքան կորուստ եմ ունեցել»:

Ահա սահման դրիր իմ օրերին, եւ կարողութիւնս ոչինչ է իմ աչքում, բոլորովին ոչնչութիւն է ամէն մարդ, որ մարմին ունի:

Արդարեւ, մարդ շրջում է ինչպէս մի ուրուական. բայց իզուր է նա տագնապում, գանձ կուտակում՝ չիմանալով, թէ ում համար:

Իսկ արդ, ո՞վ է իմ համբերութիւնը, եթէ ոչ Դու, Տէ՛ր, կամ իմ ուժն ու կարողութիւնը Քեզնից չէ՞ միթէ:

Բոլոր յանցանքներիցս փրկեցիր եւ անզգամների համար նախատինք դարձրիր ինձ:

Ես լուռ եղայ եւ չբացեցի բերանն իմ, քանզի Դու էիր գործում:

Հեռացրո՛ւ ինձնից իմ տանջանքները, որովհետեւ Քո ձեռքի զօրութիւնից հիւծուեցի ես:

Կշտամբութեամբ վասն մեղաց խրատեցեր զմարդ, մաշեցեր որպէս սարդիոստայն զանձն նորա. սակայն ընդունայն է ամենայն մարդ:

Լուր, Տէ՛ր, աղօթից իմոց, ունկն դիր խնդրուածաց իմոց. արտասուաց իմոց մի՛ լռեր:

Պանդուխտ եմ ես առաջի Քո, նժդեհ եւ անցաւոր որպէս ամենայն հարք իմ

Թոյլ արա ինձ՝ զի հանգեայց մինչչեւ երթեալ իցեմ, ուստի ոչ եւս գտանիցիմ:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէլուիա՛, օրթի՛
Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝
որ ըստ Ղուկասու.
(գլ. 15:1 - 10)

Առ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Եւ էին մերձ առ Նա ամենայն մաքսաւորք եւ մեղաւորք լսել ի Նմանէ: Տրտնջէին փարիսեցիքն եւ դպիրք եւ ասէին՝ Ընդէ՞ր Սա զմեղաւորս ընդունի եւ ուտէ ընդ նոսա: Ասաց առ նոսա զառակս զայս՝ Ո՞վ ոք իցէ ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ հարիւր ոչխար, եւ կորուսանիցէ զմի ի նոցանէ,

Մեղքերի համար կշտամբելով՝ խրատեցիր Դու մարդուն, սարդոստայնի պէս մաշեցիր նրան, բայց սուտ է ամէն մարդ:

Տէ՛ր, լսիր իմ աղօթքը, ակա՛նջ դիր խնդրանքներիս եւ արտասուքս լռութեան մի՛ մատնիր:

Պանդուխտ եմ ես Քո առաջ, օտարական եւ անցորդ՝ ինչպէս իմ բոլոր նախնիները

Թոյլ տուր ինձ հանգստանամ, մինչեւ գնալն իմ, ուստի ես էլ չեմ լինի:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ալէլուիա՛, օրթի՛.
Յիսուս Քրիստոսի Սուրբ Աւետարանը՝ ըստ Ղուկասի.
(գլ. 15:1 - 10)

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի մօտ.

Եւ բոլոր մաքսաւորներն ու մեղաւորները Նրա մօտ էին, որպէսզի լսեն Նրան: Փարիսեցիներն ու օրէնսգէտները տրտնջում էին եւ ասում. «Ինչո՞ւ է Սա ընդունում մեղաւորներին եւ ուտում նրանց հետ»: Յիսուս նրանց այս առակն ասաց. «Ձեզնից ո՞վ է այն մարդը, որ, երբ հարիւր ոչխար ունենայ եւ կորցնի նրանցից մէկը,

ո՞չ թողուցու զիննսուն եւ զիննյանապատի եւ երթայցէ զհետ կորուսելոյն, մինչեւ գտանիցէ զնա: Եւ իբրեւ գտանէ, դնէ զնա ի վերայ ուսոց իւրոց խնդալով. եւ երթայ ի տուն, կոչէ զբարեկամս եւ զդրացիս եւ ասէ ցնոսա՝ Ուրա՛խ եղերուք ընդ իս, զի գտի զոչխարս իմ զկորուսեալ: Ասեմ ձեզ, զի՝ Այսպէս է ուրախութիւն յերկինս վասն միոյ մեղաւորի որ ապաշխարիցէ՝ քան վասն իննսուն եւ ինն արդարոց որոց չիցէ պիտոյ ապաշխարութիւն: Կամ ո՞վ իցէ կին, որոյ իցեն դրամք տասն. եւ եթէ կորուսանիցէ դրամ մի, ո՞չ լուցանիցէ ճրագ եւ ածիցէ աւել ի տան, եւ խնդրիցէ ստէպ, մինչեւ գտանիցէ: Եւ իբրեւ գտանէ, կոչէ զբարեկամս եւ զդրացիս եւ ասէ՝ Ուրախ լերուք ընդ իս, զի գտի զդրամն իմ զոր կորուսի: Այնպէս, ասեմ ձեզ, ուրախութիւն եղիցի առաջի հրեշտակաց Աստուծոյ ի վերայ միոյ մեղաւորի՝ որ ապաշխարիցէ:

Եւ ասեն աղօթք Մանասէի թագաւորի՝

ՏԷՐ ԱՄԵՆԱԿԱԼ

Տէ՛ր ամենակալ, Աստուած Աբրահամու, Իսահակայ, Յակոբայ եւ զաւակի նոցա արդարոց.

արօտավայրում չի՞ թողնի իննսունիններին եւ չի՞ գնայ կորածի յետեւից, մինչեւ որ այն գտնի: Եւ երբ այն գտնի, կը դնի այն իր ուսերի վրայ խնդութեամբ եւ կը գնայ տուն, կը կանչի բարեկամներին եւ հարեւաններին ու նրանց կ՚ասի. «Ուրախացէ՛ք ինձ հետ, որովհետեւ գտայ իմ կորած ոչխարը»: Ասում եմ ձեզ, որ՝ Այսպէս ուրախութիւն կը լինի երկնքում մի մեղաւորի համար, որն ապաշխարում է, քան իննսունինը արդարների համար, որոնց ապաշխարութիւն պէտք չէ: Կամ՝ ո՞վ է այն կինը, որ, երբ տասը դրամ ունենայ եւ մի դրամ կորցնի, ճրագ չի՞ վառի եւ չի՞ աւլի տունը փութով ու չի՞ փնտրի, մինչեւ որ գտնի: Եւ երբ գտնի, կը կանչի բարեկամներին եւ հարեւաններին ու կասի. «Ուրախացէ՛ք ինձ հետ, որովհետեւ գտայ իմ կորցրած դրամը»: Ասում եմ ձեզ, Աստծու հրեշտակների առաջ այսպէս ուրախութիւն կը լինի մէկ մեղաւորի համար, որն ապաշխարում է»:

Եւ ասում են Մանասէ թագաւորի աղօթքը՝

ՏԷՐ ԱՄԵՆԱԿԱԼ

Տէ՛ր ամենակալ՝ Աստուա՛ծ Աբրահամի, Իսահակի, Յակոբի եւ նրանց արդար զաւակների.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Որ արարեր զերկինս եւ զերկիր եւ զամենայն զարդ նոցա.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Որ կապեցեր զծով բանիւ հրամանի Քո, փակեցեր զխորս, կնքեցեր ահաւոր եւ փառաւորեալ անուամբ Քով սրբով.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Որ ամենայն ինչ սարսի եւ դողայ յերեսաց ահի զօրութեան Քոյ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Անբաւ է մեծվայելչութիւն փառաց սրբութեան Քո, սաստիկ է բարկութիւն սպառնալեաց Քոց ի վերայ մեղաւորաց, անչափ եւ անքնին են ողորմութիւնք աւետեաց Քոց.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Դու, Տէ՛ր, բարձրեալ, գթած, երկայնամիտ, բազումողորմ եւ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Դու, Աստուա՛ծ, ո՛չ եղեր ապաշխարութիւն վասն արդարոցն՝ Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ, որք ոչ մեղան Քեզ.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Որ արարեցիր երկինքն ու երկիրը եւ նրանց բոլոր զարդերը.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Որ կապեցիր ծովը Քո հրամանի խօսքով, փակեցիր անդունդները, կնքեցիր Քո ահաւոր եւ փառաւորեալ սուրբ անուամբ.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Որ ամէն ինչ սարսում է եւ դողում Քո զօրութեան ահից.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Անբաւ է Քո սրբութեան փառքի մեծավայելչութիւնը, սաստիկ է Քո սպառնալիքների բարկութիւնը մեղաւորների հանդէպ, անչափ եւ անքննելի են Քո աւետիսների ողորմութիւնները.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Դու, Տէ՛ր, բարձրեալ, գթած, համբերող, բազումողորմ ես եւ ափսոսում ես մարդկանց չարիքների համար.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Դու, Աստուա՛ծ, չկարգեցի՛ր ապաշխարութիւն արդարների՝ Աբրահամի, Իսահակի եւ Յակոբի համար, որոնք չմեղանչեցին Քո հանդէպ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Այլ եդեր ապաշխարութիւն վասն իմ՝ մեղաւորիս, զի մեղայ աւելի քան զաւազ ծովու, եւ բազմացան անօրէնութիւնք իմ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Զեմ արժանի հայիլ եւ տեսանել զբարձրութիւնս երկնից ի բազմութենէ անօրէնութեան իմոյ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Կորացեալ եմ ես ի բռնութենէ կապանաց երկաթից, եւ ո՛չ գոյ ինձ հանգիստ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Բարկացուցի զսրտմտութիւն եւ զչար առաջի Քո արարի. կանգնեցի պատկեր եւ բազմացուցի զցասումն անձին իմոյ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Եւ արդ, Տէ՛ր, խոնարհեցուցանեմ զծունր սրտի իմոյ եւ հայցեմ ի քաղցրութենէ Քումմէ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, եւ զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Աղաչեմ եւ խնդրեմ ի Քէն, թող ինձ, Տէ՛ր, թող ինձ եւ մի՛ կորուսաներ զիս ըստ

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Այլ ապաշխարութիւն կարգեցիր ինձ՝ մեղաւորիս համար, քանզի մեզանչեցի աւելի քան ծովի աւազները, եւ բազմացան իմ անօրէնութիւնները.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Արժանի չեմ նայելու եւ տեսնելու երկնքի բարձունքները իմ բազում անօրէնութիւնների պատճառով.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Կորացել եմ ես երկաթէ կապանքների բռնութիւնից եւ չունեմ հանգիստ.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Սաստկացրեցի զայրոյթդ եւ չարիք գործեցի Քո առջեւ, կռապատկեր կանգնեցրեցի եւ աւելացրեցի ցասումդ իմ անձի հանդէպ.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Եւ արդ, Տէ՛ր, խոնարհեցնում եմ իմ սրտի ծունկը եւ հայցում Քո քաղցրութիւնից.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Մեղա՛յ, Տէ՛ր, մեղա՛յ, իմ անօրէնութիւնները ես ինքս գիտեմ.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Աղաչում եւ խնդրում եմ Քեզ, ներիր ինձ, Տէ՛ր, ներիր ինձ եւ կորստեան մի՛ մատնիր ինձ ըստ

անօրէնութեան իմոյ.

ամենակա՛լ Տէր թող զմեղս իմ:

Մի՛ յաւիտեան բարկանար ինձ, Տէ՛ր, եւ մի՛ յիշեր զչարիսն իմ, եւ մի՛ պարտաւորեր զիս ընդ իջեալսն ի ներքոյ երկրի չարեօք.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Զի Դո՛ւ, Աստուա՛ծ, Աստուած ապաշխարողաց ես, եւ յիս ցո՛յց զբարերարութիւնդ Քո, որ անարժան եմ.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Կեցուսցես զիս ըստ բազում ողորմութեան Քում, եւ ես օրհնեցիս զՔեզ զամենայն աւուրս կենաց իմոց.

ամենակա՛լ Տէր, թող զմեղս իմ:

Զ Քեզ, Տէ՛ր, օրհնեն ամենայն զուարթունք երկնից, եւ Քո են փառք յաւիտեանս. ամէն:

Փա՛ռք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղաչեմ եւ խնդրեմ ի Քէն, Տէ՛ր, թող ինձ զմեղս իմ:

Բազումողորմ Տէ՛ր, ողորմեա ինձ:

Աստուա՛ծ, քաւեա զիս՝ զմեղաւորս ի մեղաց

իմ անօրէնութեան.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Տէ՛ր, յաւիտեան մի՛ բարկանա ինձ վրայ եւ մի՛ յիշիր իմ չարիքները, եւ մի դատապարտիր ինձ նրանց հետ, ովքեր չարիքներով գերեզման մտան.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Քանի որ Դու, Աստուա՛ծ, ապաշխարողների Աստուածն ես, ցոյց տուր Քո բարերարութիւնը եւ ինձ՝ անարժանիս.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Ապրեցրու ինձ ըստ Քո մեծ ողորմութեան, եւ ես կ՚օրհնեմ Քեզ իմ կեանքի բոլոր օրերում.

ամենակա՛լ Տէր, թողութիւն տուր մեղքերիս:

Քեզ են, Տէ՛ր, օրհնում երկնքի բոլոր հրեշտակները, եւ Քոնն է փառքը յաւիտեանս. ամէն:

Փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աղաչում եւ խնդրում եմ Քեզ, Տէ՛ր, ներիր իմ մեղքերը:

Բազումողորմ Տէ՛ր, ողորմիր ինձ:

Աստուա՛ծ, քաւիր ինձ՝ մեղաւորիս մեղքերից

եւ կեցո՛ :

Արարի՛չ իմ եւ յո՛յս Աստուած, զթա՛ յիս՝ ի մեղուցեալ ծառայս, եւ ողորմեա ինձ՝ բազմամեղիս:

Ամէնօրհնեալ սրբուհի եւ միշտ կո՛յս Աստուածածին Մարիա՛մ, բարեխօսեա՛ առ Տէր վասն իմ՝ մեղաւորիս:

Ամենայն սուրբք Աստուծոյ, բարեխօսեցէ՛ք առ Հայր ի յերկինս վասն մեր՝ մեղաւորացս:

Քրիստո՛ս՝ Որդի՛ Աստուծոյ անոխակալ, ընկալ զաղաչանս մեր, զի ի Քեզ են ապաւինեալ անձինք մեր:

Յաղթող զօրութեամբ՝ սուրբ եւ կենդանարար եւ պատուական Խաչիւ Քով, Տէ՛ր, պահպանեա՛ զմեզ:

Առաքեա, Տէ՛ր, զհրեշտակ խաղաղութեան Քո, որ եկեալ պահեսցէ զմեզ անխռովս ի տուէ եւ ի գիշերի.

Եւ մարդասիրութեամբ Քո յիշեա՛ զմեզ, Տէ՛ր, յիշեա՛ զմեզ, յորժամ դաս արքայութեամբ Քո, եւ ողորմեա՛ մեզ:

ՔԱՐՈԶ

Եկեալքս ի խոստովանութիւն ապաշխարութեան՝ հաւատով զյոյս Միածնի Որդւոյն Աստուծոյ դիցուք ի սիրտս մեր՝ խնդրելով ի Նմանէ

եւ ապրեցրու ինձ:

Արարի՛չ եւ յո՛յս իմ Աստուած, գթա՛ ինձ՝ մեղաւոր ծառայիս եւ ողորմիր բազմամեղիս:

Ամէնօրհնեալ սրբուհի եւ միշտ կո՛յս Աստուածածին Մարիա՛մ, բարեխօսիր Տիրոջը ինձ՝ մեղաւորիս համար:

Աստուծոյ բոլոր սրբեր, բարեխօսեցէ՛ք Հօրը՝ որ երկնքում է, մեզ՝ մեղաւորներիս համար:

Քրիստո՛ս՝ Աստծու Որդի՛ անոխակալ, ընդունիր մեր աղաչանքները, քանզի Քեզ են ապաւինել մեր անձերը:

Քո սուրբ, կենդանարար եւ պատուական խաչի յաղթող զօրութեամբ, Տէ՛ր, պահպանի՛ր մեզ:

Առաքիր, Տէ՛ր, Քո խաղաղութեան հրեշտակին, որ անխռով պահի մեզ օր ու գիշեր:

Եւ Քո մարդասիրութեամբ յիշի՛ր մեզ, Տէ՛ր, երբ գաս Քո արքայութեամբ. յիշի՛ր մեզ, Տէ՛ր, եւ ողորմի՛ր:

ՔԱՐՈԶ

Հաւատով՝ ապաշխարութեան խոստովանութեան եկածներս, Աստուծոյ Միածին Որդու յոյսը մեր սրտերում՝ Նրանից խնդրենք մեր

զքաւութիւն եւ զթողութիւն յանցանաց մերոց:

Վասն զի Նա Ինքն է նախախնամողն Աստուած յաւիտենական, որ եկն կամաւ Հօր ի փրկել զարարածս, եւ ասաց՝ զԻնքն լինել քաւիչ մեղաւորաց, յոյս ապաշխարողաց՝ չնորհելով զհանգիստ աշխատելոց, ընդունելով զծանրաբեռնեալքս եւ զտաժանեալքս մեղօք յապաշխարութիւն քաւութեան:

Արդ, եկա՛յք ամենեքեան, խոնարհեալ անձամբք, բեկեալ սրտիւք, անկցուք եւ լացցուք առաջի Տեառն Արարչին մերոյ, զի անցուսցէ ի մէնջ զցասումն պատուհասի յանցանաց մերոց բարերարութեամբն Իւրով:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, կեցո՛ եւ ողորմեա՛:

ԱՂՕԹՔ

Տէ՛ր Աստուած փրկութեան մերոյ, որ ողորմածդ ես եւ գթած, երկայնամիտ, բազումողորմ, եւ զղջանաս ի վերայ չարեաց մարդկան, որ ո՛չ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալ նորա ի չար ճանապարհէն եւ զկեալն:

յանցանքներին քաւութիւն եւ թողութիւն:

Քանի որ Նա Ինքն է յաւիտենական նախախնամողն Աստուած, որ Հօր կամքով եկաւ արարածներիս փրկելու եւ ասաց, որ՝ Ինքն է մեղաւորների քաւիչը, ապաշխարողների յոյսը. տառապածներին հանգիստ շնորհելով՝ ընդունում է մեղքերով ծանրաբեռնուածներիս, տանջուածներիս ապաշխարութիւնը՝ որպէս քաւութիւն:

Արդ, եկէ՛ք բոլորս՝ խոնարհուած հոգով, փշրուած սրտով, մեր Արարիչ Տիրոջ առջեւ խոնարհուենք եւ լաց լինենք, որ Իր բարերարութեամբ մեզնից հեռացնի մեր յանցանքների ահարկու սպառնալիքները:

Ամենակալ Տէ՛ր Աստուած մեր, ապրեցրո՛ւ եւ ողորմի՛ր:

ԱՂՕԹՔ

Մեր փրկութեան Տէ՛ր Աստուած, որ ողորմած ես եւ գթած, երկայնամիտ, բազումողորմ, եւ ցաւում ես մարդկանց չարիքների համար. չե՛ս կամենում մեղաւորի մահը, այլ կամենում ես նրա դարձը չար ճանապարհից եւ ապրելը:

Դու, Տէ՛ր, առատ ողորմութեամբ Քով մխիթարեա՛ զծառայսս Քո, եւ տու՛ր սոցա տեղի ապաշխարութեան: Հաշտեա՛ մարդասիրութեամբ Քով, եւ արա՛ զսոցա անդամս Եկեղեցւոյ Քում սրբոյ: Որպէսզի առողջացեալք հոգւով՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, մտցեն յԵկեղեցի Քո սուրբ. եւ ընդ ժողովրդեան Քում Քեզ հանցեն զօրհնութիւն եւ զփառս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա արկանեն փիլոն (շուրջառ) եւ տանեն առաջի բեմին եւ քահանայն ասէ՝

զՅՈՐԴՈՐԱԿս

Օրհնութեամբ բարեբանեսցուք զամենակալն Աստուած՝ որ զգեցոյց ձեզ հանդերձ փրկութեան եւ պատմուճան ուրախութեան: Իբրեւ փեսայի՝ եդ ձեզ պսակ եւ իբրեւ զհարսն՝ զարդու զարդարեաց զձեզ. եւ եդ զսաղաւարտ փրկութեան ի գլուխս ձեր, եւ զէն անվթար ընդդէմ հակառակորդին: Վասն որոյ եւ մեք փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Դու, Տէ՛ր, Քո առատ ողորմութեամբ մխիթարի՛ր Քո այս ծառաներին եւ տո՛ւր նրանց ապաշխարութեան հնարաւորութիւն: Հաշտուի՛ր Քո մարդասիրութեամբ եւ դարձրո՛ւ նրանց Քո սուրբ Եկեղեցու անդամները: Որպէսզի հոգով առողջացածները՝ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ, մտնեն Քո սուրբ Եկեղեցին. Քո ժողովրդի հետ միասին Քեզ առաքեն օրհնութիւն եւ փառք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա գցում են փիլոն (շուրջառ), տանում բեմի առաջ, եւ քահանան ասում է՝

ՅՈՐԴՈՐԱԿ

Օրհնութեամբ բարեբանէք ամենակալ Աստծուն, որ ձեզ հագցրեց փրկութեան հանդերձ եւ ուրախութեան պատմուճան: Իբրեւ փեսայի՝ պսակադրեց ձեզ եւ իբրեւ հարսի՝ զարդով զարդարեց. եւ ձեր գլխին դրեց փրկութեան սաղաւարտ, եւ անխափան զէնք՝ ընդդէմ հակառակորդի: Որի համար փառաւորում ենք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա երկրպագեցուցանէ որպէս զնորակնիքս՝ առաջի Սրբոյ Սեղանոյն եւ Սրբոյ Խաչին, ասելով.

(այս անուն) եկեալ ի մկրտութիւն ապաշխարութեան, երկրպագութիւն մատուցանեն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Եւ հրամայէ ի ծունր իջանել. եւ ասէ՝

ԱՂՕԹՔ

Աստուած բարձրեալ, գովեալ եւ փառաւորեալ՝ ահաւոր, ահեղ, անքննին, անհաս՝ յամենայն արարածոց. որ ի վերդ ես քան զերկինս՝ անտեսանելիդ սրովբէից: Դու աղքատացուցանես եւ մեծացուցանես, հարկանես եւ Դու Ինքդ բժշկես: Դու սփոփիչ վտանգելոց եւ ողջացուցիչ մարդկան՝ ի Քեզ հաւատացելոց: Եւ արդ՝ ընկա՛լ, Տէ՛ր, զմաղթանս եւ զպաղատանս մեր՝ զոր բազում հեծեծանօք մատուցանեմք եւ հայցեմք ի Քէն՝ մի՛ սրտմտութեամբ Քով յանդիմաներ զմեզ եւ մի՛ բարկութեամբ Քով խրատեր, զի կարի վիրաւորեալ եմք զազրագործ անօրէնութեամբ եւ աղտեղեալ մարմնով եւ հոգւով՝ կալով առաջի սուրբ անուանդ Քո եւ առաջի

Եւ ապա քահանան նրանց՝ իբրեւ նորակնքուածների, երկրպագել է տալիս Սուրբ Սեղանի եւ Սուրբ Խաչի առջեւ՝ ասելով.

(այս անուն) եկած լինելով ապաշխարութեան մկրտութեան, երկրպագութիւն են մատուցում Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն:

Եւ հրամայում է ծնկել. եւ ասում է՝

ԱՂՕԹՔ

Աստուած բարձրեալ, գովեալ եւ փառաւորեալ, ահաւոր, ահեղ, անքննելի, անհաս բոլոր արարածների համար. որ առաւել վեր ես, քան երկինքները, անտեսանելի՝ սերովբէներին: Դու ես աղքատացնում եւ հարստացնում, հարուածում եւ Ինքդ բժշկում. Դո՛ւ ես վտանգուածների սփոփիչն, եւ Քեզ հաւատացողներին առողջացնողը: Եւ այժմ, Տէ՛ր, զազրագործ անօրէնութեամբ սաստիկ վիրաւորուած, աղտոտուած մարմնով եւ հոգով՝ կանգնած ենք Քո սուրբ անուան եւ սուրբ սեղանի առջեւ. Քո սրտմտութեամբ եւ բարկութեամբ մեզ մի՛ յանդիմանիր եւ մի՛ խրատիր, այլ ընդունիր մեր մաղթանքները եւ պաղատանքները որ մատուցում եւ խնդրում ենք Քեզանից՝

սրբոյ սեղանոյ Քո: Հա՛յր երկնաւոր, վասն զի Դու սուրբ ես, եւ Որդիդ Միածին՝ ներող ընդ Սուրբ Հոգւոյդ ճշմարտութեան. որ վասն մեր մեղաւորացս եկիր յաշխարհ, եւ ասացեր Քո ամենասուրբ բերանովդ, եթէ՝ Ի դառնալն մեղաւորին առ Իս, ո՛չ յիշեսցին չարիք նորա առաջի Իմ: Եւ արդ, Տէ՛ր, մի՛ յիշեր զչարիս սոցա եւ զանօրէնութիւնս սոցա՝ եթէ կամաւ եւ եթէ ակամայ, եթէ գիտութեամբ եւ եթէ անգիտութեամբ, եւ, կամ ի մոռացմանէ ինչ մեղուցեալ իցէ սոցա եւ մեր: Վասն զի, Դո՛ւ, Տէ՛ր գթութեանց, որ թողեր զիննսուն եւ զինն յանապատին եւ զհետ մոլորելոյն ընթացար, եւ այժմ հայեաց յաղաչանս ծառայից Քոց եւ համարեա զապաշխարութիւնս սոցա՝ ի գործս արդարութեան:

Բա՛ց զաչս եւ զականջս սոցա եւ զմեր ամենեցուն, զի ծանիցուք զՔեզ ճշմարիտդ Աստուած, եւ Քեզ հանցուք զօրհնութի՛ւն եւ զփա՛ռս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Խաղաղութիւն ամենեցուն,
Աստուծո՛յ երկրպագեսցուք.

բազում հեծեծանքներով: Հա՛յր երկնաւոր, որովհետեւ Դու սուրբ ես, եւ Միածին Որդիդ՝ ճշմարտութեան Սուրբ Հոգուդ հետ միասին՝ ներող. որ մեզ մեղաւորներիս համար աշխարհ եկար եւ Քո ամենասուրբ բերանով ասացիր, թէ՝ «Երբ մեղաւորը դառնայ ինձ, նրա չարիքները իմ առջեւ չեն յիշուելու»: Եւ այժմ, Տէ՛ր, սրանց չարիքները եւ անօրէնութիւնները՝ կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, եւ, կամ մեր եւ սրանց մոռացած որեւէ մեղանչում մի՛ յիշիր: Քանի որ, Դո՛ւ, Տէ՛ր գթութիւնների, որ իննսունիններին անապատում թողեցիր եւ մի մոլորուածի յետեւից գնացիր, այժմ նայիր Քո ծառաների աղաչանքներին եւ սրանց ապաշխարութիւնը՝ արդարութեան գործ համարիր:

Բա՛ց աչքերն ու ականջները սրանց եւ մեր բոլորի, որ ճանաչենք Քեզ՝ ճշմարիտ Աստուա՛ծ, եւ Քե՛զ տանք օրհնութի՛ւն եւ փա՛ռք Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ամենքին խաղաղութիւն,
Աստծո՛ւն երկրպագենք.

Աստուա՛ծ բարերար եւ բազումողորմ, ողորմեա՛ ծառայիցս Քոց այսոցիկ՝ ի Քեզ ապաւինելոցս, եւ հաստատեա՛ զսոսա ամենակարող Աջովդ Քով սրբով. եւ տու՛ր իմաստութիւն սրբութեամբ եւ անբծութեամբ գնալ ի ճանապարհս Քո սուրբս եւ անարատս: Եւ մի՛ թողացուցաներ զսատանայ մարտնչել ընդ սոսա՝ ցանկութեամբ, կամ ձանձրութեամբ, եւ կամ պատճառանօք բարեգործութեան: Այլ՝ բարերարութեամբ բոլորովիմբ՝ յամենայն մեքենաւոր հնարից հակառակորդին պահեա զսոսա, եւ ի ճգնութիւնս պահոց եւ աղօթից առաջնորդեա՛ սոցա:

Աղաչեմ զՔեզ, Տէ՛ր, լե՛ր սոցա հայր խրատու եւ ապաւէն յամենայն ժամ. եւ յաջողեա՛ ի խորհուրդս հոգեւորս եւ ի գործս աստուածայինս. եւ զամենայն զոր ինչ մեղուցեալ իցեն՝ եթէ խորհրդով եւ եթէ մտածութեամբ, թողութիւն շնորհեա՛ բարերարութեամբդ Քո: Աղաչեմ զՔեզ, Տէ՛ր բարերար, տու՛ր սոցա ապաշխարութիւն եւ արդարացո՛ զսոսա: Դարձցին սոքա ըստ անսուտ բանի Քում, որպէս եւ ասացեր, եթէ՝ Դարձարու՛ք առ Իս՝ եւ Ես դառնամ առ ձեզ: Եւ, որ զպարտականն տոկոսեր սաստելով նմա, եթէ՝

Աստուա՛ծ բարերար եւ բազումողորմ, Քեզ ապաւինող Քո այս ծառաներին ողորմի՛ր եւ Քո ամենակարող սուրբ Աջովդ հաստատո՛ւն պահիր սրանց, եւ տո՛ւր իմաստութիւն՝ սրբութեամբ ու անբծութեամբ գնալու Քո սուրբ եւ անարատ ճանապարհով: Եւ թոյլ մի՛ տուր սատանային մարտնչել սրանց հետ՝ ցանկութեամբ, կամ ձանձրութեամբ, եւ կամ բարեգործութան պատճառաբանութեամբ: Այլ, Քո բովանդակ բարերարութեամբ՝ պահի՛ր սրանց հակառակորդի ամենայն մեքենայական հնարքներից եւ առաջնորդիր աղօթքի եւ պահքի ճգնութեան:

Աղաչում եմ Քեզ, Տէ՛ր, եղի՛ր սրանց համար խրատող հայր եւ մի՛շտ ապաւէն: Յաջողութի՛ւն տուր հոգեւոր խորհուրդների եւ աստուածային գործերի մէջ: Թողութի՛ւն շնորհիր Քո բարերարութեամբ, եթէ մեղանչել են խորհրդով եւ մտքով: Աղաչում եմ Քեզ, բարերա՛ր Տէր, տո՛ւր ապաշխարութիւն եւ արդարացրո՛ւ սրանց: Թող սրանք դառնան դէպի Քեզ ըստ Քո անսուտ խօսքի, որ ասացիր. «Դարձէ՛ք դէպի ինձ՝ եւ ես կդառնամ դէպի ձեզ»: Եւ վաշխ պահանջող պարտապանին սաստեցիր, թէ՝

Պա՛րտ էր ողորմել ծառայակցին քում, որպէս ես քե՛զ ողորմեցայ. եւ ցաշակերտսն ասելով, եթէ՝ Ո՛չ թողուցուք ի սրտից ձերոց զյանցանս ընկերին, եւ ո՛չ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր: Եւ արդ, Տէ՛ր բարերար, ես՝ անարժան ծառայս Քո, զոր արժանի արարեր այսմ մեծի շնորհի, ըստ հրամանի եւ ըստ բազում մարդասի-րութեան գթութեան Քում, թողո՛ւմ զյանցանս սոցա եւ օրհնեմ՝ ըստ բանի Քում, եւ արձակեմ յամենայն կապանաց մեղաց՝ բարերար ողորմու-թեամբդ Քով. եւ հայցեմ յառատ ողորմութենէդ Քումմէ՝ Արձակեա՛ զսոսա, որպէս երբեմն զծերունին Սիմէօն՝ որ ընկալաւ զԲանդ Աստուած մարմնով ի գիրկս իւր: Եւ առաքեա՛ զհրեշտակ խաղաղութեան՝ պահապան լինել սոցա ի տուէ եւ ի գիշերի. եւ պահեա՛ զսոսա սուրբ եւ անարատ՝ վասն անուան Քո սրբոյ եւ ահաւորի, զի հաստատուն կացցեն բոլորով սրտիւ իւրեանց, որք յամենայն մտաց եւ յամենայն զօրութենէ իւրեանց եկին ի խոստովանութիւն, եւ ի զղջումն ապաշխարութեան եւ ի քաւութիւն մեղաց:

Արժանաւորեա՛ զսոսա, Տէ՛ր, Երկնից Ար-քայութեանդ հասանել ընդ սուրբս Քո:

«Պէ՛տք էր ողորմել քո ծառայակցին, ինչպէս ես քե՛զ ողորմեցի». եւ աշակերտներին ասելով. «Եթէ ի սրտէ չթողնէ՛ք ձեր ընկերոջ յանցանքները, ձեր Հայրն էլ չի՛ թողնի ձեր յանցանքները»:

Եւ արդ, Տէ՛ր բարերար, ես՝ Քո անարժան ծառան, ում արժանացրիր այս մեծ շնորհին, ըստ հրամանի եւ բազում մարդասիրութեան գթութեան Քո՝ թողութի՛ւն եմ տալիս սրանց յանցանքներին եւ օրհնում՝ ըստ Քո խօսքի, եւ Քո բարերար ողորմութեամբ՝ արձակում եմ բոլոր մեղքերի կապանքներից եւ հայցում Քո առատ ողորմութիւնից՝ Արձակի՛ր սրանց, ինչպէս մի ժամանակ Սիմէօն ծերունուն, որ Բան Աստծուդ մարմնով իր գիրկն ընդունեց: Եւ ուղարկի՛ր խաղաղութեան հրեշտակին՝ պահապան լինելու սրանց ցերեկով եւ գիշերով. Քո սուրբ եւ ահաւոր անուան համար՝ պահի՛ր սրանց սուրբ եւ անարատ, որպէսզի հաստատուն մնան իրենց ամբողջ սրտով, որոնք իրենց ամբողջ մտքով եւ զօրութեամբ եկան խոստովանութեան, զղջման ապաշխարութեան եւ մեղքերի քաւութեան:

Տէ՛ր, արժանացրո՛ւ սրանց Քո սրբերի հետ հասնել Երկնքի Արքայութեանը:

Մարդասէ՛ր Տէր, որ կոչեցեր զծառայսս Քո ի լուսաւորութիւն վարուց հնազանդութեան, արդ ընկա՛լ զսոսա շնորհօք մարդասիրութեան Քո՝ սրբութեամբ եւ արդարութեամբ: Քանզի յուսացան ի Քեզ, եւ նուիրեցին զանձինս իւրեանց Քեզ՝ Հօր եւ Փրկչիդ մերոյ՝ Յիսուսի Քրիստոսի եւ շնորհողի՝ Հոգւոյդ Սրբոյ: Տու՛ր սոցա զօրութիւն եւ իմաստութիւն, զի Դո՛ւ ես՝ Տէր կենաց եւ Աստուած ողորմութեանց, ողորմեա՛ մարդասիրութեամբդ Քո:

Աղաչեմք զՔեզ, Տէ՛ր, եւ խնդրեմք ի բարերարութենէդ Քումմէ, անցո՛ ի բացեայ առ ի սոցանէ զամենայն որոգայթ թշնամւոյն: Օրհնեա՛ սուրբ Աջովդ Քո եւ զերծո՛ յամենայն վտանգից. մերկեա՛ յամենայն մեղաց, նորոգեա՛ Հոգւովդ Քով Սրբով եւ խառնեա՛ ի թիւս արդարոց Քոց:

Գթա՛, Տէ՛ր, մարդասիրութեամբդ Քո յաղաչանս ծառայիս Քո՝ զի առ Քեզ, Տէ՛ր, համբարձի զաչս իմ եւ զձեռս իմ՝ առ բարեգութդ Աստուած:

Խոնարհեա՛ ի բարբառ պաղատանաց ծառայիս Քո եւ արա՛ արժանի զսոսա նախանձաւոր լինել ճգնութեան մեծին Եղիայի,

Մարդասէ՛ր Տէր, որ կանչեցիր Քո այս ծառաներին լուսաւորուելու հնազանդութեան վարքով, այժմ ընդունի՛ր սրանց Քո մարդասիրութեան շնորհով՝ սրբութեամբ եւ արդարութեամբ: Քանզի Քեզ յուսացին, եւ նուիրեցին իրենց անձերը Քեզ՝ Հօրը եւ մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսին եւ շնորհողիդ՝ Սուրբ Հոգուդ: Տո՛ւր սրանց զօրութիւն եւ իմաստութիւն, քանի որ Դո՛ւ ես Տէրը կեանքի եւ ողորմութեան Աստուածը, ողորմի՛ր Քո մարդասիրութեամբ:

Աղաչում ենք Քեզ, Տէ՛ր, եւ խնդրում Քո բարերարութիւնից՝ հեռացրո՛ւ սրանցից թշնամու բոլոր որոգայթները: Օրհնի՛ր Քո սուրբ Աջովդ եւ փրկի՛ր ամենայն վտանգից, ազատի՛ր բոլոր մեղքերից, նորոգի՛ր Քո Սուրբ Հոգովդ եւ խառնի՛ր Քո արդարների թուին:

Գթա՛, Տէ՛ր, մարդասիրութեամբդ Քո ծառայի աղաչանքներին, քանզի դէպի Քե՛զ, Տէ՛ր, բարձրացրի իմ աչքերը եւ իմ ձեռքերը՝ դէպի բարեգութ Աստուածդ:

Խոնարհուի՛ր Քո ծառայի պաղատանքների խօսքերին եւ արժանի՛ արա սրանց նախանձախնդիր լինելու ճգնութեանը մեծն Եղիայի,

եւ սրբոյ Կարապետին Յովհաննու, եւ սրբոյ Լուսաւորչին, եւ երանելոյն Անտոնի եւ ամենայն սրբոց Քոց, զի հանգիցէ ի սոսա առաքինութիւն շնորհաց նոցա. եւ աղօթիւք եւ օրհնութեամբք նոցա՝ հաստատեսցին սոքա ի սէր սրբութեան Քո: Փրկեա՛, Տէ՛ր, ի փորձութենէ եւ ի գործոց անօրէնութեանց եւ յամենայն խաւարային խորհրդոց:

Շնորհեա՛ խաղաղական կենդանութիւն յաստիսս եւ տու՛ր զօրութիւն Սուրբ Նշանաւդ՝ գնալ ի վերայ իժի եւ քարբի, եւ կոխել զսատանայ եւ զամենայն զօրութիւն հակառակամարտին:

Եւ առաջնորդեա՛ գնալ ի ճանապարհս արդարութեան՝ աներկբայ հաւատով, զի արժանաւորք լիցին Երկնից Արքայութեանդ հասանել ընդ ամենայն սուրբս Քո՝ ի փառս Ամենասուրբ Երրորդութեանդ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյդ Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ զկնի թողութիւն շնորհեսցէ Քահանայն ի հրապարակի, (զի եւ այլքն յորդորեսցին) այսպէս ասելով.

Մարդասէրն Աստուած թողցէ՛ զմեղս ձեր՝ զորս գործեալ իցէք եթէ բանիւ եւ եթէ գործով, եթէ խորհրդով, եթէ մտածութեամբ՝ զկամայ եւ

սուրբ Յովհաննէս Կարապետի, սուրբ Լուսաւորչի, երանելի Անտոնի եւ Քո բոլոր սրբերի, որպէսզի սրանց մէջ բնակուեն նրանց առաքինութեան շնորհները. եւ նրանց աղօթքներով եւ օրհնութիւններով՝ սրանք հաստատուեն Քո սրբութեան սիրոյ մէջ: Փրկի՛ր, Տէ՛ր, փորձութիւնից, անօրէնութեան գործերից եւ խաւարային բոլոր խորհուրդներից:

Շնորհի՛ր խաղաղ կեանք այստեղ եւ տո՛ւր զօրութիւն Քո Սուրբ Նշանով՝ գնալու իժի եւ քարբի վրայով, ոտնակոխ անելու սատանայի եւ հակառակամարտի ամբողջ զօրութիւնը:

Եւ առաջնորդի՛ր գնալ արդարութեան ճանապարհն՝ աներկբայ հաւատով, որպէսզի արժանաւոր լինեն հասնելու Երկնից Արքայութեանդ Քո բոլոր սրբերի հետ՝ ի փա՛ռս Ամենասուրբ Երրորդութեանդ Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգուդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Յետոյ քահանան ի ցոյց բոլորի (որպէսզի միւսները եւս յորդորուեն) թողութիւն է շնորհում այսպէս ասելով.

Թող մարդասէր Աստուած թողնի՛ ձեր մեղքերը՝ որոնք գործել էք թէ՛ խօսքով, թէ՛ գործով, թէ՛ խորհրդով եւ թէ՛ մտածութեամբ՝ կամայ եւ

զակամայ, զգիտութեամբ եւ զանգիտութեամբ, ի մոռացմանէ եւ յամօթահարութենէ: Զամենեսեան ըստ Հրամանի Տեառն, թողեալ եմ ես՝ յերկրի եւ Աստուած՝ յերկինս:

Թողեալ լիցին ձեզ մեղք ձեր՝ որպէս զանառակ որդւոյն, որպէս զպոռնկին, որպէս զմաքսաւորին, որպէս զքանանացւոյն, որպէս զաւազակին եւ որպէս զամենայն մեղուցելոցն եւ դարձելոցն առ Տէր. որ բժիշկն է հոգւոց՝ զախտս հոգւոց ձերոց բժշկեսցէ՛. զոտս ձեր յանպարկեշտ գնացից պահեսցէ՛. կօշկօքն միւսանգամ զարդարեսցէ՛. զբարձս, եւ զծունկս եւ զազդերս ձեր՝ օծմամբ աստուածային իւղոյն՝ սրբեսցէ՛ եւ պատսպարեսցէ՛: Աղիք եւ սիրտք ձեր գազանացեալ եւ քարացեալ՝ եղիցի՛ն որպէս զգառանցն հեզոց. եւ որպէս զողորմաբուն արդարոցն՝ հեզացեալ եւ կակղացեալ: Գլուխք ձեր բթացեալ՝ արժանի եղիցի՛ն առնուլ զանթառամ զպսակն. ականջք ձեր՝ որք զանդէպսն լուեալ, արժանի եղիցի՛ն զերանաւէտն լսել զձայն, թէ՝ Եկա՛յք օրհնեալք Հօր իմոյ. աչք ձեր՝ որ յարատս են հայեցեալ, արժանի եղիցի՛ն տեսանել զԼոյսն Աստուծոյ. բերանք ձեր դատարկաբանեալ, արժանի եղիցի՛ն երգել զերգս հրեշտակաց. քիմք ձեր՝ որք զարգելեցելոցն զճաշակս ախորժեալ,

ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ, որոնք մոռացել էք կամ ամաչել էք ասել: Այդ բոլորը, Տիրոջ հրամանով, թողնո՛ւմ եմ երկրի վրա՝ ես, իսկ երկնքում՝ Աստուած:

Թող ներուե՛ն ձեր մեղքերը՝ ինչպէս անառակ որդունը, ինչպէս պոռնիկինը, ինչպէս մաքսաւորինը, ինչպէս քանանացունը, ինչպէս աւազակինը, ինչպէս բոլոր մեղանչածներին ու Տիրոջը դարձածներինը: Հոգիների Բժիշկը թող բժշկի՛ ձեր հոգիների խոցերը, թող պահի՛ ձեր ոտքերն անպարկեշտ ընթացքից եւ թող կրկի՛ն զարդարի կոչիկներով. ձեր բարձքը[1], ծնկները եւ ազդրերը աստուածային իւղի օծմամբ թող սրբի՛ ու պատսպարի՛: Ձեր մոլեգնած ու քարացած սրտերն ու աղիքները թող դառնա՛ն ինչպէս հեզ գառներինը եւ ինչպէս ողորմաբուն արդարներինը՝ հեզացած ու կակղացած: Ձեր բթացած գլուխները թո՛ղ արժանի դառնան ստանալու անթառամ պսակները: Ձեր ականջները, որ լսել են անպատշաճ բաներ, թո՛ղ արժանի լինեն լսելու այն երանաւէտ խօսքը, թէ՝ «Եկէ՛ք, իմ Հօր օրհնեալներ»: Ձեր աչքերը, որ արատաւոր են նայել, թո՛ղ արժանի լինեն տեսնելու Աստծու Լոյսը: Ձեր դատարկաբանած բերանները թո՛ղ արժանի լինեն երգելու հրեշտակների երգերը: Ձեր քիմքերը, որ ախորժել են ճաշակել արգելուած

[1] Մարմնի ծանրութիւնը կրող.

եղիցի՛ն սուրբ Մարմնոյ եւ Արեան Տեառն ճաշակման արժանացեալ. ունգունք ձեր՝ որք զհոտ մահու մեղաց ընկալեալ, արժանի եղիցի՛ն ընդունել զհոտ կենաց ի կեանս. երեսք ձեր լկտի եւ լրբացեալ՝ ի տիեզերական հրապարակին մի՛ դարձցին ամաչեցեալ. ձեռք ձեր անպտուղ լքեալ՝ ի պատճառս բարեգործութեան՝ ի տան Տեառն եւ ի գաւիթս Աստուծոյ մերոյ եղիցին տնկեալ. միտք ձեր խառնակեալ եւ պղտորեալ՝ ամպա-փարատ պարզ երկնից եղիցի՛ն նմանեալ. մեղք ձեր լեռնացեալ եւ բարձրացեալ՝ եղիցին որպէս կապար ի խորս սուզեալ: Եւ անձինք ձեր յանցաւորք՝ եղիցին որպէս զաղաւնիս նորա-փետուր զարդարեալ եւ համարձակապէս յԱրքայութեան ժառանգութիւնս վերաթեւեալ:

Փոխանակ երկրաւոր աշխատութեանց ձերոց, զերկնային հանգիստն՝ ի գոգն Աբրահամու, ի դասս մարգարէիցն եւ յաթոռս առաքելոցն՝ ուր ժողովք ամենայն սրբոցն են, ի Տեառնէ ընկալեալ վայելեսջի՛ք՝ օրհնել եւ փառաւորել զԱմենասուրբ զԵրրորդութիւնն այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

պտուղները, թո՛ղ արժանի լինեն ճաշակելու Տիրոջ Սուրբ Մարմինն ու Արիւնը: Ձեր ռունգները, որոնք մեղքերով մահուան հոտն են ընկալել, թո՛ղ արժանի լինեն ընդունելու կենաց հոտը կեանքում: Ձեր անամօթացած երեսները տիեզերական հրապարակներում թո՛ղ չամաչեն: Ձեր անպտուղ թուլացած ձեռքերը թո՛ղ բարեգործութեամբ Տիրոջ տանն ու մեր Աստծու գաւիթներում տնկուեն: Ձեր խառնակուած ու պղտորուած մտքերը թո՛ղ նմանուեն անամպ ու պարզ երկնքին: Ձեր լեռնացած ու բարձրացած մեղքերը թո՛ղ լինեն ինչպէս կապար՝ սուզուած ծովի խորքերում: Եւ ձեր յանցաւոր անձերը թո՛ղ աղաւնիների պէս նորափետուր զարդարուեն եւ համարձակապէս թռչեն վեր՝ դէպի ժառանգած Արքայութիւնը:

Ձեր երկրաւոր չարչարանքների փոխարէն Տիրոջից ընդունելով երկնային հանգիստը՝ վայելէ՛ք այն Աբրահամի գոգում, մարգարէների դասերում եւ առաքեալների աթոռներին, ուր բոլոր սուրբերի բազմութիւններն են, որպէսզի օրհնէք եւ փառաւորէք Ամենասուրբ Երրորդութեանն այժմ եւ միշտ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աշխարհաբարի վերածեց՝ Է. Մ.

Օրհնեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն Քո.

Եկեսցէ արքայութիւն Քո.

Եղիցին կամք Քո որպէս յերկինս՝ եւ յերկրի:

Զհաց մեր հանապազորդ տո՛ւր մեզ այսօր.

Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց.

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն.

Զի Քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն:

Օրհնեալ մեր Տէր Յիսուս Քրիստոս. ամէն:

Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ թող լինի Քո անունը.

Քո արքայութիւնը թող գայ.

Քո կամքը թող լինի երկրի վրայ, ինչպէս որ երկնքում է:

Մեր հանապազօրեայ հացը տուր մեզ այսօր.

Եւ թող մեզ մեր պարտքերը, ինչպէս եւ մենք ենք թողնում մեր պարտապաններին.

Եւ մի՛ տար մեզ փորձութեան, այլ փրկի՛ր մեզ չարից.

Քանզի Քոնն է արքայութիւնը եւ զօրութիւնը եւ փառքը յաւիտեանս. ամէն:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

«Ապաշխարեցէք զի մերձեալ է Արքայութիւն Երկնից».— ասում է մեր Տէր Յիսուս Քրիստոս:

Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռը 2012 թ.-ին հրատարակեց «Մայր Մաշտոց» ծիսարանը՝ ուր զետեղուած են Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու մշտապէս կիրառուող արարողակարգեր, կանոններ, ծէսեր:

2011 թ.-ին տպագրուեց «Մեղաւորներին ապաշխարութեան կանչելու կանոն»-ը՝ վերցրած 1807 թ.-ի «Մայր Մաշտոց» ծիսագրքից:

2012 թ.-ին վերահրատարակած «Մայր Մաշտոց»-ում անփոփոխ է մնացել՝ 1807 թ.-ի «Մայր Մաշտոց»-ի «Մեղուցեալսն յապաշխարութիւն կոչելոյ» առկայ կանոնը:

Կանոնը հնաւանդ է, ըստ հետեւեալ փաստարկի. Մեսրոպեան Հայոց լեզուի նշանագրերի գիւտից յետոյ, մեր Եկեղեցու սուրբ Հայրերը՝ Ս. Մեսրոպ Մաշտոց Վարդապետը, Ս. Սահակ Պարթեւ Հայրապետը (387-439 թթ.) իրենց աստուածաշնորհ սուրբ աշակերտ-թարգմանիչներ՝ Մովսես Խորենացին, Կորիւնը..., յետոյ Յով. Մանդակունի կաթողիկոսը (478-490 թթ.) եւ այլք Սուրբ Հոգով յօրինեցին կանոններ..., ներմուծեցին ասորերէն, հունարէն կանոննե-

րի, ծէսերի թարգմանութիւններ... եւ հիմնեցին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հնաւանդ ծիսարանը անուանելով՝ **«Կարգաւորութիւն Օրհնութիւնաբեր Ցուցակ»** խորագրով: Այս «Կարգաւորութիւն Օրհնութիւնաբեր Ցուցակ»-ի կանոնացանկում կայ հետեւեալը՝ **«Ապաշխարող կարգել (առնել)»**, եւ **«Ապաշխարող արձակել՝ ի Մեծի հինգշաբաթին»**, երանելոյն Կիւրղի յերուսաղէմացւոյն (350-386 թթ.) գրեալ ի ԻԱ (21) ամի հայրապետութեան իւրոյ. Առջեւան եւ Կորիւն թարգմանիչք բերին ի Հայս:

«Մաշտոց»-ների (Մատենադարան ձեռ. հ. 965, հ.958, հ. 972..) կանոնացանկում գրուած է. **«Ի կոչումն ապաշխարութեան»** կամ **«Կոչումն յապաշխարութիւն»** կանոնը՝ Հովհաննու Մանդակունեցու Հայոց Կաթողիկոսի կողմից:

Ժամանակների ընթացքում ճոխանում է «Կարգաւորութիւն Օրհնութիւնաբեր ցուցակը»: Գրանիւթմագաղաթի հաստութեան պատճառով անյարմար, անհնար է դառնում մաս-մաս ծաւալուն գրքերը մեկտեղել մի կազմի մեջ («ի մի տփի»). եւ եկեղեցում՝ ծիսարանի ամենօրեայ գործածութիւնը դառնում է դժուարամատչելի:

Այս շփոթը կարգաւորում է Սուրբ Մաշտոց Ա Եղիվարդեցի Հայոց Կաթողիկոսը (897-898 թթ.). «Սա կարգեաց զգիրսն, որ ըստ անուն իւրում կոչի «Մաշ-

տոց». ժողովեալ զամենայն կարգեալ աղաւթսն եւ զընթերցուածսն ի միասին յարմարեալ յաւելուածով յիւրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան». (Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց»):

Նոյնը վերահաստատում է Գրիգոր Ծերենցը (ԺԴ–ԺԵ դդ.) «Յայսմաւուրք»-ում. «Այս վարդապետս՝ Մաշտոց, ընդ բարի վարուց առաքինութեանն իւրոյ, արար եւ բազում ուղղութիւնս կարգաց եւ Կրօնից՝ սուրբ Եկեղեցւոյ. եւ ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն, եւ զթերին ինքն էլից յաստվածային շնորհաց իւրոյ եւ եդ ի միում տփի. անուն գրոյն այն՝ «Մաշտոց» կոչեցաւ, զի նորին աշխատասէր կամօքն ի մի վայր ժողովեցաւ»:

Այդոյետ, ծիսարանը կոչւում է՝ «Մաշտոց» («Մայր կամ Մեծ Մաշտոց», «Ձեռաց Մաշտոց»՝ ըստ գործառոյթի): Հետագայում, Ս. Մաշտոց Եղիվարդեցի ճգնաւոր–Կաթողիկոսի վարք–յիշատակարանը, իր ուրոյն տեղն է գտնում «Մայր Մաշտոց»-ների կանոնացանկում:

«Մաշտոց»-ները ի հայտ են գալիս անհամեմատ նուրբ մշակուած մագաղաթների, այնոյետ՝ թերթթոթի վրա. սկսեալ 1569 թ.–ից՝ գրատիպ հրատարակութեամբ:

Ներկայացնենք «Կանոն»-ը պարունակող ձեռագիր «Մաշտոց»-ների օրինակներ.

ա. Հոռոմոսի «Մաշտոց», ԺԲ դար (մոտ. 1180 թ.), Հոռոմոսի վանք.

(Ս. Յակովբեանց ձեռ. հ. 3299, գրիչ եւ ստացող՝ Հովհաննէս քհյ. Հոռոմոսի Վանեցի)

«Կանոն՝ ապաշխարող առնելոյ»:

բ. Սսեցւոյ «Մաշտոց», 1345 թ.

(Մխիթարեան Վենետիկի ձեռ. հ. 1173 / 332, Սիս, 1345 թ., գրիչ եւ ծաղկող՝ Գրիգոր դպիր (սպասարկող՝ Գ. Լուսաւորչի աջոյն), ստացող՝ Յովհաննէս եպիսկոպոս (Աղբակի Ս. Բարդուղիմէոսի թեմի առաջնորդ), թերթ-մագաղաթ):

«Կանոն՝ Ապաշխարող աւրինելոյ».

«Պարտէ՝ ամենայն քրիստոնէի յանձին ունել զլուծ խոնարհութեան եւ զծառայութեանն՝ ի Քրիստոս, որ լինի ի պահսն քառասնորդացն. առաջի չորեքշաբթին խոստովանել զամենայն հանցանս իւր զոր գործեալ է»:

գ. «Մայր Մաշտոց» (Էջմիածին) Մատենադարան, ձեռ. հ. 965, 1432 թ.

(Եղեգեաց գաւառի Երերան անապատ. 1432 թ., գրիչ՝ Դավիթ կր. եւ Ղազար, ստացող՝ Դավիթ կր. (գրիչ).

«**Կոչումն ապաշխարութեան».** Տեառն Յոհաննու Մանդակունոյ Կաթողիկոսի Հայոց:

դ. «Մայր Մաշտոց» (Էջմիածին) Մատենադարան, ձեռ. հ. 958, 1473 թ.

(Այրարատի Ուրծ գիւղ, 1473 թ., գրիչ՝ Խաչատուր, ստացող՝ Մեսրոպ աբեղայ.)

«Կոչումն յապաշխարութիւն» Տեառն Յովհաննու Մանդակունոյ Կաթողիկոսի Հայոց:

ե. «Մայր Մաշտոց» (Էջմիածին) Մատենադարան, ձեռ. հ. 998, 1546 թ.

(գրիչ՝ Յովհաննէս, Ստեփանոս, ստացող՝ Յովհաննէս վրդ.)

Կանոն՝ «Ի կոչումն ապաշխարութեան». Տեառն Յովհաննու Մանդակունեցոյ Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Այս «Մաշտոց»-ների կանոնացանկում, որպէս վերջաբան, զետեղուած է՝ «Վասն վարուց Երանելոյն Մաշտոցի (833–898 թթ.) յիշատակարան»-ը:

Տպագիր «Մաշտոց»-ներ

ա. «Ձեռաց Մաշտոց», 1667թ.

(Ամստերդամ, տպագր. Ոսկան Երեւանցու, տպ. Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգսի, ի հայրապետութեան Տ. Յակոբայ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսի (1655–1680) ամենայն Հայոց 1667 թ.): Տիտղ. «Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի. Արարողութիւնք հանապազորդեան եկեղեցեաց

Հայաստանեայց՝ պարունակող եօթեանց գլխաւորաց խորհրդունակ սրբազնագործութեանց եւ այլոց մասնաւորաց պաշտմանց, հաստատացելոց ի հնագունից հարցն սրբոց՝ առ ի լրումն հոգեկանին հարկաւորութեան եւ մարմնականին պիտանացութեան, սահմանագրեցեալ օժանդակութեամբ Հոգւոյն Սրբոյ»:

«Կանոն՝ կոչումն ապաշխարութեան»:

բ. «Ձեռաց Մաշտոց», 1676 թ.

(Մարսէլ, տպ. Էջմիածնի և Ս. Սարգսի. ի հայրապետութեան Տեառն Յակոբայ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսի ամենայն Հայոց. Արդեամք եւ գոյիւք Աւետիսի եւ Սողոմոնի պաշտոնատարի:

«Կանոն՝ կոչումն յապաշխարութիւն»:

գ. «Ձեռաց Մաշտոց», 1704 թ.

(Կ. Պոլիս, տպ. Աստուածատուր Կոստանդնապոլսեցու. ի Հայրապետութեան Տ. Նահապետ Ա. Եղեսացի Կաթողիկոսի (1651–1705 թթ.) ամենայն Հայոց):

«Կանոն՝ կոչումն ապաշխարութեան»:

Դիտարկուած «Մաշտոց»-ներում՝ **«Կոչումն ապաշխարության»** կանոնին հաջորդում է՝ **«Մեծի հինգշաբաթին զապաշխարողսն արձակելոյ»** կանոնը:

դ. «Մայր (Մեծ) Մաշտոց» 1807 թ.

(Կ. Պոլիս, տպ. Պողոս Յովհաննիսեանի (Արապեան), տպ. Ս. Էջմիածնի):

«Կանոն զմեղուցեալսն յապաշխարութիւն կոչելոյ»:

Ի տարբերութիւն նախորդ «Մաշտոց»-ների, այս՝ Մայր Մաշտոցում, կանոնը՝ խմբագրուած է. այսպէս՝ Կ. Պոլսում 1780 թուից Էջմիածնի Մայր Աթոռի նուիրակն էր՝ Էջմիածնի միաբան, Տ. Սիմէօն Երեւանցի Կաթողիկոսի աշակերտ՝ Տ. Մինաս արքեպիսկոպոս Վաղարշակերտցին: Նրա մասին յիշատակուած է որպէս՝ շնորհալի խմբագրող, քարոզների հեղինակ, տաղերգու. եւ նրա արածն ըստ ամենայնի եղել է Եկեղեցու ծէսի սրբագրման՝ Սիմէօն Երեւանցու ծրագրի մասը: Նաեւ, ծիսագիրքը եզրափակող «Յիշատակարան տպողաց»-ում գրուած է, թէ՝ ««Մաշտոցի» «բաղկացութեանն անձներաբար պատճառ՝ նախապէս զերանելի թարգմանիչ վարդապետսն մեր, եւ վերջապէս ըստ սրբագրութեան մասին՝ զհոգելոյս Տէր Սիմէօն սրբազան Կաթողիկոսն, զնորին նուիրակ՝ զՏէր Մինաս արքեպիսկոպոսն, եւ ...՝ ըստ կարյաց սրբագրիչ սորին»:

«Մաշտոցեան մատենադարանի Մայր ցուցակում այս ծիսակարգը համարւում է «Մայր (Մեծ) Մաշտոց»-ի լաւագոյն-գործածելի հրատարակութիւն».

այսպէս է նկատել Մ. Մատենադարանի վաստակաշատ գիտաշխատող՝ Գէորգ Տէր-Վարդանեանը. («Մայր Մաշտոց», գիրք Ա. հ. Ա., Ս. Էջմիածին, 2012 թ.):

Սուրբ Աւետարանի խորհրդակատար՝ Սուրբ եկեղեցու տնօրինութեամբ եւ օրհնութեամբ՝ աներկբայ հաւատով, հոյսով, սիրով կրենք՝ ապաշխարութեան «քաղցր» լուծը.

Յետեւենք՝ ուղղամիտ, ճշմարտախօս, արդարագործ, սուրբ Հայրերի յուսաշող ընթացքին.

Սուրբ Մաշտոցների «Կարգաւորութիւն օրհնութիւնաբեր» կանոններով՝ ապաշխարութեան մկրտութեամբ՝ նորոգուենք, եւ բաղձանք լսելու Փրկչի երանաւետ կանչը՝

«Եկէք իմ Հօր օրհնեալներ, ժառանգեցէք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստուած Արքայութիւնը»:

Մեր Սուրբ Հայրերի բարեխօսութեամբ, Տէր Աստուած օրհնի եւ շնորհատու լինի բոլոր նրանց՝ ովքեր մասնակից են եղել «Յաւելուած»-ի պատրաստմանը:

Նաեւ, օրհնութեամբ եղիցի յիշատակը՝ Գէորգ Տէր-Վարդանեանի՝ իր օգտաշատ աշխատութեան համար:

Է. Մ.

Հայաստանեայց Առաքելական Սուրբ
Եկեղեցի
Արարատեան Հայրապետական Թեմ

ՄԵՂԱՒՈՐՆԵՐԻՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ԿԱՆՈՆ

Ի Քրիստոս ննջած բարեպաշտ ծնողներիս՝
Մնացական Մինասեանի եւ Հայկուհի
Մկրտչեան-Մինասեանի յիշատակին.

Ողորմի Աստուած

Հովանաւոր՝ *Ա. Մ.*

Կազմող և սրբագրող՝ *Էլմիրա Մինասեան*

Խմբագիր՝ *Մարթա Արաբեան*

Համակարգչային օպերատոր՝ *Մարո Սարգսեան*

Համակարգչային ձեւաւորումը՝
Լեւոն Իսրայէլեանի, Նունէ Սարգսեանի

Շապիկի նկարը՝ խորհրդարանի ձեռագործ վարագոյր
(Մայր Տաճար)

Լուսանկարող՝ *Յովհաննէս Բաղալեան*

Տպագրվել է «Զանգակ–97» ՍՊԸ–ի տպարանում
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak